

ՇՈՒՇԻԻ ՄԷՋ ՓՈՂՈՑ ՄԸ ԿՈՉԱԾ ԵՆ ԱԹԱԹՈՒՐՔԻ ԱՆՈՒՆՈՎ

Շուշիի փողոցներեն մեկը կոչուած է Քեմալ Աթաթուրքի անունով: «Թուի-թըր»-ի իր պաշտօնական էջին վրայ այս մասին կը յայտնէ Ազրայէճանի մէջ Թուրքիոյ դեսպան Ճահիթ Պաղճը՝ նշելով, որ Շուշիի կարեւոր փողոցներեն մեկը կը կրէ այդ անունը:

Թուրք դեսպանը նաեւ Ազրայէճանի կողմէ բռնագրաւուած Շուշիէն լուսանկար մը հրապարակելով նշած է, որ թէյ կը խմէ, եւ թէյը այդ պահուն համ կու տայ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԿԱՏՈՒԻ ՀՐԱԺԱՐԱՇ, ԻՍԿ ԽՈՐՀՐԳԱՐԱՐԱՆԸ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԻՐ ՆԱԽԱԳԱՀԸ ԸՆՏՐԵԼՈՒ ԺԱՄԿԷՏԻՆ ՄԷՋ

Մինչ ամերիկեան տոյարին սակը կը սաւառնի եւ անոր դիմաց լիբանանեան դրամակնիքը անելի եւս կ'արժեզրկուի, երկրին գործադիր իշխանութիւնը արդէն իսկ մուտք կը գործէ ընթացիկ աշխատանքները կատարելու իր դերակատարութեան մէջ:

Շաբաթ գիշեր նախագահական պալատը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ Նոր խորհրդարանի ընտրութեամբ, կառավարութիւնը հրաժարած կը նկատուի եւ կը գործէ իբրեւ ընթացիկ հարցերու կառավարութիւն:

Նախագահ Անու շնորհակալութիւն յայտնեց վարչապետին ու Նախարարներուն եւ անոնցմէ պահանջեց պաշտօնակատարի իրենց դերակատարութիւնը կատարել, մինչեւ Նոր կառավարութեան նշանակուի:

Մինչ այդ Նորընտիր խորհրդարանի նստաշրջանը սկսաւ երէկ՝ կիրակի, 22 մայիս 2022-ին, իսկ խորհրդարանը այս թուականէն սկսեալ 15 օրուան ժամանակ ունի՝ ընտրելու խորհրդարանի նախագահը:

Նշենք, որ խորհրդարանի նախագահի ընտրութիւնը կրնայ ըլլալ առաջին մարտահրաւերը, որ երկիրը պիտի դիմագրաւէ՝ նկատի ունենալով, որ խորհրդարանը կազմող երեսփոխանական պլոքներուն միջեւ այս իմաստով կայ տարակարծութիւն:

Սկսելու համար տարակարծութիւն կայ, որովհետեւ խորհրդարանի նախագահի թեկնածուն Նեպիի Պըրրիի է՝ խորհրդարանի ներկայ նախագահը. անոր թեկնածութիւնը պաշտօնապէս առաջադրուեցաւ Ազատագրուի եւ բարգաւաճում երեսփոխանական պլոքին կողմէ:

Պլոքը մաղթեց, որ բոլորը զօրակցին Պըրրիի թեկնածութեան եւ աշխատին անոր հետ:

Մինչդէռ Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախագահած Զօր հանրապետութիւն համախմբումն ու փոփոխութեան ներկայացուցիչները նկատուող Նորընտիր երեսփոխանները կտրականապէս մերժեցին Պըրրիի թեկնածութիւնը:

Իր կարգին, Թրիփոլիի երեսփոխան Աշրաֆ Ռիֆի, որ այցելած էր Լիբանանեան ուժեր կուսակցութեան ղեկավար Սամիր ժահժահի, հաստատեց, որ իրենք կտրականապէս կը մերժեն զօրակցիլ նախկին իշխանութեան համակարգը ներկայացնող անձնաւորութեան մը: «Մենք կը զօրակցինք փոփոխութիւնն ու գերիշխանութիւնը ներկայացնող ուժի թեկնածուին, ո՛վ որ ալ ըլլայ ան», հաստատեց Ռիֆի:

Ժահժահ Նշենք, որ Պըրրիի չեն կրնար ընտրել, որովհետեւ ան հակառակորդ քաղաքական ուժերը կը ներկայացնէ՝ արեւելքէ, որ իրենք կը փափաքին տեսնել խորհրդարանի մեծամասնութիւնը ներկայացնող աշխուժ եւ գործունեայ կառավարութիւն մը:

ԹԵՀՐԱՆԻ ՄԷՋ ԱՀԱՔԵԿՈՒԱԾ Է ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՀԱԿԱԳՈՒՆԴԻ ՍՊԱՆԵՐԷՆ ՄԷԿԸ



Իրանի Յեղափոխական պահակազունը յայտարարեց, որ երէկ մայրաքաղաք Թեհրանի մէջ ահաբեկած է Զասան Սայատ Խատիարին՝ արեւելքէ: «Ահաբեկական գործողութիւնը գործադրուեցաւ յեղափոխութեան թշնամիներուն եւ համաշխարհային ամբարտաւանութեան հետեւորդներուն կողմէ»:

Իրանեան «Թասնիմ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ ահաբեկումը կատարուած է Թեհրանի Մուսժիհի Իսլամ թաղին մէջ մոթորսիքէթ Նստած երկու անձերու կողմէ:

Դէպքը պատահած է շուրջ ժամը 4:00-ին, սպային տան մօտ եղող փողոց թաղի մը մէջ, երբ ան կը պատրաստուէր տուն մուտք գործելու:

Նշենք, որ Յեղափոխական պահակազունը նախքան Խատիարինի ահաբեկումը յայտարարած էր, որ իսրայէլեան զադտնի պալատարկութեան առնչակից ցանց մը ձերբակալած է:

ՀԱՄԱԳԱՅԻՆԻ ՄԻՕՐԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ՝ ՄԱՅԻՍԵԱՆ «ԱՊՐԷԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ» ՄԸ «ՄՓԻՌՔԻ ՏԱՐՈՒՄ» ՄԷՋ

ԷՁ 3

ՊԱՅՏԸՆ. «ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՊԱՏՐԱՍ ԵՆ ԱՋԱԿՅԵԼՈՒ ՀԱՅ-ԱԶՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԳԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽՈՒԺԱՅՄԱՆ»

Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտըն շնորհաւորած է Ազրայէճանի նախագահ Իլիհամ Ալիեւը յառաջիկայ ազգային տօնի՝ Անկախութեան օրուան առիթով: «Ինթըրֆաքս» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին կը յայտնէ ազրայէճանական պետութեան ղեկավարի պաշտօնական կայքը:

Ան նաեւ ընդգծած է, որ Միացեալ Նահանգներ պատրաստ են աջակցելու Ազրայէճանի եւ Զայաստանի միջեւ դիւանագիտական հաղորդակցութիւններու աշխուժացման, ինչպէս նաեւ նպաստելու Ազրայէճանի տնտեսական, փոխադրամիջոցային եւ մարդ-



կային կապերու կարգաւորման, «որ ամբողջ Կովկասին ու Անդրկասպեան շրջանին պիտի արտօնէ բարգաւաճիլ»:

Շար.ը՝ էջ 3

ՃՈՆՍԸՆ ԷՐՏՈՂԱՆԻՆ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ Է՝ ՄԻՆՉԵՒ ՕԹԱՆ-Ի ՅՈՒՆԻՍԵԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՖԻՆԼԱՆՏԱՅԻ ԵՒ ՇՈՒԷՏԻ ՀԵՏ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բրիտանիոյ վարչապետ Պորիս Ճոնսըն դիմած է Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանին՝ խնդրելով մինչեւ յունիսի տեղի ունենալիք ՕԹԱՆ-ի վեհաժողովի մեկնարկը կարգաւորել Ֆինլանտայի եւ Շուէտի հետ իր տարակարծութիւնները: Այս մասին հաղորդեց ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը:

«Ան նախագահ Էրտողանին կոչ ուղղած է աշխատելու շուտացի, ֆինլանտացի եւ ՕԹԱՆ-ի գործընկերներու հետ՝ յաջորդ ամիս Մատրիտի մէջ տեղի ունենալիք վեհաժողովէն առաջ լուծելու որեւէ մտահոգութիւն, եւ ըսած է,



որ Բրիտանիան պատրաստ է աջակցելու», նշուած է բրիտանական կառավարութեան ղեկավարի գրասենեակին հրապարակած հաղորդագրութեան մէջ:

Շար.ը՝ էջ 7

«ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ ՀԻԲՆԳՈՒԹԻՒՆԸ ՄՏԱՀՈԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՐ Է, ԵՒ ՊԱՏՈՒԱՍՏՆԵՐՈՒ ՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴԱՐՄԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՅԸ ԿԸ ՔՆՆԱՐԿԵՆՔ»

Կ'ԸՍԷ ՊԱՅՏԸՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտըն յայտարարեց. «Կապիկի ծաղիկ հիւանդութիւնը մտահոգութեան աղբիւր է, եւ պատուաստներու ու գոյութիւն ունեցող դարմաններու հարցը կը քննարկենք»:

Սնտեղէնի եւ դեղորայքի ամերիկեան վարչութիւնը համաձայն գտնուեցաւ Կապիկի ծաղիկի դարմանման համար Նոր դեղի կիրարկման: Նիւէորքեան «ՄԻԿԱ Թեքնոլոճի» ընկերութիւնը յայտարարեց, որ կանաչ լոյս



ստացած է արտադրելու «Թի.Փի.Օ. Էքս. Էքս»-ի 4-րդ տարբերակը:

Շար.ը՝ էջ 7

ՀՅՐ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ԱՐՅԱՆԸ ԱՅՍՕՐ

Խօսք կ'առնեն

Արթուր Թովմասեան
Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ

Արթուր Մոսիեան
Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի «ՀՀ Դաշնակցութիւն» խմբակցութեան ղեկավար

Տեղի կ'ունենայ **չորեքշաբթի, 25 մայիս 2022-ին**, երեկոյեան ժամը **8:00-ին**. Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ:

Այս առիթով տեղի կ'ունենայ Արցախի բռնագրաւուած պատմաշխարհային կոթողներու ցուցահանդէս, կազմակերպութեամբ **ՋԱՀ** յանձնախումբին:

Ազգային-հայրենասիրական երգերով կը մասնակցի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «**Շնորհալի**» երգչախումբը:

Հրաւեր

«ԴԻՄԱԳՐՈՒԹԵԱՆ» ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՏԱՏԵՑ ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՎՃՈԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ



21 մայիսին Երեւանի մէջ կայացած բազմամարդ քայլարշաւէն ետք Ֆրանսայի հրապարակին վրայ տեղի ունեցած հանրահաւաքին ընթացքին ԶՅԴ-ի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան յայտարարեց, որ ցուցարարները իրենց վճռականութեամբ ցոյց կու տան, որ եթէ մեկը համարձակի Զայաստանի շահերուն չհամընկնող փաստաթուղթ ստորագրել, ան Զայաստան մուտք չի գործեր:

Ան նշեց, որ Զայաստանի իշխանութիւններուն օգուտեան հասնելու շտապեց Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Չաւուշօղլուն, որ յայտարարեց, թէ Զայաստանի ղեկավարութիւնը ներսէն՝ արմատական ուժերուն, իսկ դուրսէն՝ սփիւռքի ճնշման տակ է: «Այո՛, ճիշդ կ'ընէ՛ Զայաստանի իշխանութիւնը ժողովուրդին կողմէ ճնշման տակ է, սփիւռքը ոտքի է, Արցախը ոտքի է, իսկ ձեր գործընկերը Զայաստանի մէջ՝ մերժուած», յայտարարեց Սաղաթելեան:

Ան դիտել տուաւ, որ Թուրքիոյ՝ բացայայտ աջակցութիւնը Զայաստանի օրուան իշխանութեան, շատ բնական է, որովհետեւ անիկա Խուր-հնազանդ կը կատարէ Թուրքիոյ իշխանութեան պահանջները:

Բայց եւ այնպէս Սաղաթելեան շեշտեց, որ օրուան վարչապետը հայութիւնն ու Զայաստանը չի ներկայացներ՝ շեշտելով, որ իրենք մօտէն պիտի հետեւին Պրիքսելի մէջ տեղի ունեցող զարգացումներուն: Ան հաստատեց, որ պայքարը պիտի շարունակուի Նոյն թափով եւ անդադրուի:

Ասոր զուգահեռ, ԶՅԴ Զայաստանի Գերագոյն մարմինը հրապարակեց հետեւեալ յայտարարութիւնը, որուն մէջ լուսարձակի տակ առաւ «Դիմադրութեան» շարժումը ընկձելու անյաջող փորձերը, որոնք անընդունելի են:

«Անբարոյ եւ հակաիրաւական մեթոտներով լայնածաւալ յարձակում է կազմակերպուել Արցախի հայաթափման եւ Զայաստանի թրջացման դէմ Զայաստանի Զանրապետութիւնում, Արցախում եւ Սփիւռքում ձեւաւորուած դիմադրութեան շարժման նկատմամբ: Կեղծ օրինակականութեան շղարշով քողարկելով իր հակապետական եւ հակաժողովրդավարական գործելակերպը, իրաւապահ համակարգը թիրախաւորել է շարժման մէջ դերակատարում ունեցող ուժերին ու անձանց, հայրենիքի համար իրենց կեանքը չխնայած, հաշմանդամ դարձած բազմաթիւ հայորդիներին եւ նրանց հարազատներին:

Շար.ը՝ էջ 8

ՊՐԻՒՍՔՍԵԼԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՇԱՐԼ ՄԻՇԵԼԻ, ՓԱՇԻՆԵԱՆԻ ԵՒ ԱԼԻԵՒԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

22 մայիսին Պրիքսելի մէջ տեղի ունեցաւ Զայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի, Եւրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշելի եւ Ազրայէճանի նախագահ Իլիհամ Ալիեւի եռակողմ հանդիպումը, որուն մասին Նոյն օրն իսկ մամլոամսնութիւններ հաղորդուեցան:

Նիկոլ Փաշինեանի, Շարլ Միշելի եւ Իլիհամ Ալիեւի հանդիպումէն առաջ տեղի ունեցաւ առանձին հանդիպում մը՝ Փաշինեանի եւ Միշելի միջեւ: Զայաստանի վարչապետի աշխատակազմէն հաղորդեցին, որ զրուցակիցները անդրադարձան Նոյն օրն իսկ նախատեսուած եռակողմանի հանդիպումին՝ կարելոյ նկատելով երկխօսութեան շարունակականութիւնը:

Նիկոլ Փաշինեան ներկայացուց Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակը, մարդասիրական խնդիրներն ու ընդգծեց անոնց լուծման անհրաժեշտութիւնը:

Ն. Փաշինեան եւ Շարլ Միշել միտքեր փոխանակեցին նախորդ տարուան 14 դեկտեմբերին Պրիքսելի մէջ տեղի ունեցած եռակողմանի հանդիպումին ձեռք բերուած պայմանաւորութիւններու կատարման ընթացքին վերաբերեալ՝ յոյս յայտնելով, որ եռակողմանի բանակցութիւնները կ'ըլլան արդիւնաւետ, ինչ որ պիտի նպաստէ կայունութեան ու խնդիրներու համապարփակ լուծման:

Անոնք քննարկեցին նաեւ Զայաստան-Եւրոպական Միութեան երկկողմանի օրակարգին վերաբերող հարցեր, մասնաւորապէս՝ Եւրոպական Միութեան կողմէ Զայաստանի համար յայտարարուած 2,6 միլիարդ եւրոյի տնտեսական եւ ներդրումային ծրարի իրականացման ընթացքը:

«ՀՈՍ ԷԻՆՔ ԵՒ ՄՆԱՅԻՆՔ» ԿԱՐԳԱԽՕՍՈՎ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏ ՀՈՍԱՆՔԸ ՆՇԵՑ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԻՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ազգային ազատ հոսանք կուսակցությունը շաբաթ, 21 մայիս 2022-ի երեկոյան «Պիլե»-ի մեջ կազմակերպեց երեսփոխանական ընտրություններուն իր արձանագրած յաղթանակին նուիրուած ժողովրդային փառատոս մը՝ «Հոս էինք եւ մնացինք» կարգախօտով:

Փառատոսին ներկայ գտնուեցաւ նաեւ ՀՀ-ի Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի եւ Հայկական Երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի:

Այս առիթով Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժապրան Պասիլ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց ի նպաստ կամ իրենց դէմ քուէարկած են՝ հաստատելով, որ իրենք բոլորին համար կ'աշխատին:

Ան նշեց, որ Ժեզգիկի համար Նեղուած է, որովհետեւ անոր ներկայացուցչութիւնը գողցուած է իրենցմէ, «սակայն Ժեզգիկ կը մնայ առնականներուն ամբողջը», ըսաւ ան:

Պասիլ նկատել տուաւ, որ իրենք երեսփոխանական ընտրութիւններուն արդիւնքները վիճարկումի պիտի ենթարկեն՝ անելցնելով, որ ներկայիս իրենց համախմբումը 21 երեսփոխան կը հաշուէ, սակայն վիճարկելէ ետք ընտրութիւններուն արդիւնքները, այդ թիւը պիտի հասնի 23-ի:

«Իրականութիւնը այն է, որ մենք ենք խորհրդարանի մեծագոյն համախմբումը: Մենք չենք Նեղուիր, եթէ նաեւ ամենէն փոքր պլոքը ըլլանք, թող մեծագոյնը ինք գործէ ու պատասխանատուութիւն ստանձնէ», նշեց Պասիլ:

Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավարը ընդգծեց, որ իրենք յաղթած են իրենց վարկանշային քուէներով եւ առանց զօրակցութեան, իսկ ո՛վ որ կը խօսի վարկանշային քուէի մասին, ապա ան պետք է ստանայ վարկանշային գումարի պատասխանը:



Ան շեշտեց, որ ոմանք հաստատած են, որ ընտրութիւններուն յաղթանակ արձանագրելէ ետք ամերիկեան տղարին սակը պիտի նուազի, «բայց եւ այնպէս բարբառնելով հանդերձ իրենց յաղթանակին մասին, տղարին սակը օրըստօրէ կը բարձրանայ», նշեց ան:

Շաբ.ը՝ էջ 7

ՎԻԹԱՆԻ ԲԱԼԱՍԱՆԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Անցնող շաբաթ Լիբանան այցելեց Արցախի հերոս եւ Արցախի անվտանգութեան խորհուրդի քարտուղար Վիրաթի Բալասանեան: Ան իր առաջին այս այցելութեան ընթացքին ծանօթացաւ լիբանանահայ համայնքի գործունէութեան եւ կառոյցներուն:

Վիրաթի Բալասանեան այցելեց Համազգայինի «Մելանկթոն եւ Հայկ Արսլանեան» ճեմարան, Ազգային միացեալ վարժարան ու Ազգային «Շղիշէ Մանուկեան» քոլեճ եւ հանդիպում ունեցաւ տնօրէնութեանց ու աշակերտութեանց հետ: Ծանօթանալէ ետք կրթական օժանդակներուն, ան իր հիացմունքը արտայայտեց լիբանանահայ վարժարաններու կրթական եւ հայակերտումի ազգանդեր ու հայրենասնուէր աշխատանքին կապակցութեամբ: Աշակերտութեան հետ հանդիպումները անցան ջերմ ու հետաքրքրական լինելով: Աշակերտներուն եւ լսեց նաեւ անոնց տեսակետներն ու ականջալուր դարձաւ 44-օրեայ պատերազմին գծով անոնց ապրումներուն եւ տագնապներուն: Ան պատգամեց աշակերտութեան անմար պահել իրենց մէջ պահուն ջատիկութեան ջահը:

Բալասանեան այցելեց նաեւ «Ազդակ»-ի խմբագրատուն եւ հանդիպում ունեցաւ ՀՀ-ի Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բագրատունիի ու «Ազդակ»-ի տնօրէնութեան հետ: Խորհրդող ա կ ց ու լ օ ի ն ե ռ ու առանցքը կազմեցին լիբանանահայ համայնքի դիմագրուած մարտահրաւերները եւ Արցախի ներկայ իրավիճակը: Բալասանեան հանդիպում ունեցաւ նաեւ ՀՀ-ի արխիւային նիւթերու պատասխանատու պատմաբան Երուսող Փամպուրեանի հետ: Ան հետաքրքրութեամբ լսեց ՀՀ-ի արխիւներուն մէջ Արցախի մէջ Հաշտակցութեան ծաւալած գործունէութեան վերաբերեալ գոյութիւն ունեցող նիւթերու մասին:

Արցախի հերոսը այցելեց նաեւ LOU-ի ընկերաբժշկական կեդրոն եւ հանդիպում ունեցաւ LOU-ի Շրջանային վարչութեան եւ կեդրոնի տնօրէնութեան հետ ու մօտէն ծանօթացաւ LOU-ի գործունէութեան տարբեր բնագաւառներուն: Այս առիթով ան դրուատիքով արտայայտուեցաւ ՀՕՄ-ի Արցախի մէջ ծաւալած բազմաբնոյթ աշխատանքներուն մասին:

Բալասանեան այցելեց նաեւ Այնճար հայաւան ու հանդիպեցաւ քաղաքապետին եւ շրջանի կոմիտէին հետ ու շրջագայեցաւ նաեւ գիւղի կառոյցները: Ան ծանօթանալէ ետք գիւղի հայաբոյր մըթնոլորտին եւ Հայաստանով ու Արցախով բաբախող անոր էութեան, բարձրօրէն գնահատեց տարուող աշխատանքները: Այնճար այցելութեան առիթով Բալասանեան այցելեց նաեւ Արցախի 44-օրեայ պատերազմին անմահացած հերոս Գեորգ Հաճեանի ծնողքին եւ հանդիպեցաւ անոր մօր ու ընտանեկան պարագաներուն հետ: Այս առիթով ան վկայութիւններ ներկայացուց Նահատակին մասին ու անդրադարձաւ նաեւ անոր հետ առնչուող դրուագներուն:

Իր կեցութեան ընթացքին Բալասանեան այցելեց նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարան եւ Հայոց ցեղասպանութեան նուիրուած Նահատակաց մատուռ, ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութեան որբերու «Արամ Պէգիբեան» թանգարան:

Վիրաթի Բալասանեան խոր տպաւորութիւններով վերադարձաւ Արցախ՝ ցանկութիւն յայտնելով Արցախի ու լիբանանահայ համայնքին միջեւ յարաբերութիւնները յաւելեալ խորացնելու եւ այդ ծիրին մէջ յայտնելով իր ամբողջական պատրաստակամութիւնն ու գործակցութիւնը:



պանութեան նուիրուած Նահատակաց մատուռ, ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութեան որբերու «Արամ Պէգիբեան» թանգարան:

Վիրաթի Բալասանեան խոր տպաւորութիւններով վերադարձաւ Արցախ՝ ցանկութիւն յայտնելով Արցախի ու լիբանանահայ համայնքին միջեւ յարաբերութիւնները յաւելեալ խորացնելու եւ այդ ծիրին մէջ յայտնելով իր ամբողջական պատրաստակամութիւնն ու գործակցութիւնը:

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ Վ. ՕՀԱՆԵԱՆ-ԳԵՈՐԳԵԱՆԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ ՊԱՂՏԱՏԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Ժորժ Զալլասի զինաւորած նախարարութեան պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէր նախկին նախարար Վարդիէ Օհանեան-Գեորգեան, 9-11 մայիս 2022-ին, Պաղտատի մէջ ունեցաւ պաշտօնական հանդիպումներ, պետական եւ մարմնակրթութեան ոլորտներու պատասխանատուներուն հետ:

Պաշտօնական հանդիպումներուն առընթեր, Վ. Օհանեան-Գեորգեան պատեհութիւնը ստեղծեց ծանօթանալու Պաղտատի հայկական գաղութին:

Այս շրջագիծին մէջ, ան նախ եւ առաջ այցելեց Ազգային Առաջնորդարան, ուր հանդիպում մը ունեցաւ Իրաքի հայոց առաջնորդ գերշ. Տ. Աւագ արք. Ասատուրեանի հետ, քննարկելով Իրաքի հայութեան իրավիճակը, կատարուող աշխատանքները եւ առկա դժուարութիւնները:

Տեղի ունեցաւ հանդիպում նաեւ Իրաքի Ազգային վարչութեան ատենապետ Մելքոն Մելքոնեանի եւ թեմական խորհուրդի անդամներուն հետ:

Վ. Օհանեան-Գեորգեան այցելեց ՀՅԸՄ-ի Պաղտատի ակումբը եւ ծանօթացաւ աշխատանքներուն, միաժամանակ հանդիպում ունենալով ՀՅԸՄ-ի Պաղտատի վարչութեան փոխատենապետ Յակոբ Սահակեանի եւ վարչութեան անդամներուն հետ:

Պաղտատ իր կեցութեան ընթացքին Վ. Օհանեան-Գեորգեան հանդիպումներ ունեցաւ նաեւ Իրաքի Հայ Դատի յանձնախումբի պատասխանատու Մելքոն Մելքոնեանի, Նուշիկ Մելքոնեան-Վարդանեանի, եւ Իրաքի նախագահական պալատի խորհրդրական Գրիգոր Տէր Յակոբեանի հետ:

Վ. Օհանեան-Գեորգեան տեսակցեցաւ նաեւ Պաղտատի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան գործերու ժամանակակար հաւատարմատար Ալեք Հարիպեանի հետ:

Պաղտատի հայկական կեդրոններու այցելութիւնը պսակուեցաւ Պաղտատի հայոց եկեղեցի այցելութեամբ:



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

●ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԵԱՆ նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, Լիբանանի մէջ նախորդ 24 ժամուան ընթացքին արձանագրուած են «Քորոնա» ժահրով 72 վարակուածներ եւ մահացած 2 ուրիշներ:

●ՄԵՒ շուկային մէջ ամերիկեան տոլարին փոխարժեքը բարձրացաւ 32.500 լ. ոսկիի:

●ՄԱՐՈՆԻ համայնքի Պշարա Ռայի պատրիարքը կոչ ուղղեց դատական իշխանութեան իր դերակատարութիւնը ունենալու՝ 4 օգոստոսի պայթումին գծով, ինչպէս նաեւ քայլեր առնելու՝ Լիբանանի գանձարկի գումարները իւրացնողներուն, լիբանանցիները մութի ենթարկողներուն, ինչպէս նաեւ ամերիկեան տոլարի սակը բարձրացնողներուն դէմ:

●ՅՈՅՆ ուղղափառ համայնքի Պէրոյթի առաջնորդ Էլիաս Անուէ Եպիսկոպոսը կոչ ուղղեց նորընտիր երեսփոխաններուն՝ իշխանութեամբ չգինովաւաւալու, այլ՝ վերածուելու գիրենք ընտրողներուն ծայրին եւ ամեն ջանք ի գործ դնելու՝ արդար եւ ժողովրդավար երկիր մը կառուցելու համար:

●ՎԱՐՉԱԴՐԵՏԻ պաշտօնակատար Նեմիպ Միքայէլ շաբաթավերջին վարչապետարանին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորթըի Շիան, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները:

●ԸՆԴՀԱՆՈՒՐ ապահովութեան ընդհանուր տնօրէն հազարապետ-գորավար Ապպաս Իպրահիմ շաբաթավերջին ուղղուեցաւ Միացեալ Նահանգներ, ուր հանդիպումներ պիտի ունենայ ամերիկացի բարձ-

րաստիճան պաշտօնատարներու հետ:

●ՀԱՂՈՐԴԱՅՈՒԹԵԱՆ միջոցներու նախարարի պաշտօնակատար Ճոնի Քըրըմ շեշտեց, որ իրենք հաղորդակցութեան մարզը փրկած են՝ անելցնելով, որ Նոյնիակ հաղորդակցութեան սակը երբ բարձրանայ, անկեղ պիտի մնայ շրջանին մէջ ամենէն միջին սակը: Քըրըմ անելցուց, որ լիբանանցիներուն բջիջային հեռաձայնի սակերը միջին հաշուով պիտի հասնին 7 տոլարի:

●ՀԱՆՕԳՈՒՏ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու պաշտօնակատար Ալի Համիէ ընդգծեց, որ ելեմտական մարզը վերակառուցելու, ինչպէս նաեւ տնտեսական եւ ելեմտական մարզերուն զարթոնքը ապահովելու իմաստով որդեգրուած քաղաքականութիւններուն նկատմամբ իրենք մօտեցումը գիտական է եւ ուսումնասիրուած:

●ՀԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ դիմադրութեան երեսփոխանական պլոքի նախագահ, երեսփոխան Սոհամետ Ռաատ յայտնեց, որ իրենք կը մասն հաւասարակշռութիւն պահող երեսփոխանական ուժ մը, որ կրնայ ներկայ գտնուիլ քաղաքական հոլովոյթներու եւ աշխատիլ՝ պահպանելու համար ժողովուրդին շահերը:

●ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ հանդիպում պլոքի նախագահ, երեսփոխան Թայմուր Ժամպլաթ յայտնեց, որ ժողովուրդը ձայնողեցուցած է իրեն դէմ քաղաքական անաբեկումը, որ ծրագրուած էր ներքին եւ արտաքին ուժերու կողմէ:

Շաբ.ը՝ էջ 7



ՀՅԴ ԼԵՄ-Ի ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ԵՐԹԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ» ՇԱՐԺՈՒՄԻՆ



Կազմակերպւթեամբ ՀՅԴ Լիբանանի երիտասարդական փուլի, շաբաթ, 21 մայիսին, Պուրճ Ռամուտի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի «Դիմադրութիւն» «Չարթին» Լաո» շարժումի զօրակցական երթ մը։

Երթը ընթացք առաւ «Շաղոյեան» կերպիւն եւ շրջեցաւ Պուրճ Ռամուտի հայկական թաղամասերուն՝ «Արախամ Աշեան», «Արաքս», «Մարաշ» թաղերուն մէջ, հասաւ մինչեւ Տորա, ապա կրկին վերադարձաւ եւ ընթացքը աւարտեց Պուրճ Ռամուտի հրապարակին վրայ։



ԼԵՄ-ականները իրենց ձեռքերուն բռնած էին «Չարթին» Լաո» եւ «Դիմադրութիւն» պատառներ, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Արցախի դրօշներ։

«Զեգի համար Արցախը տարածք է, մեզի համար՝ սուրբ հայրենիք», «Տէրն ենք մեր հայրենիքին», «Միութիւն, պայքար, յաղթանակ» կարգախօսներով եւ ազգային-յեղափոխական երգերու ընկերակցութեանը կատարուած երթին ընթացքին ԼԵՄ-ականները ժողովուրդին բաժնեցին «սթիքըրներ»։

Երթի ընթացքին մայրուին կերպով հնչեց նաեւ «Չարթի» լաո» երգը։

Նշենք նաեւ, որ օրեր առաջ ԼԵՄ-ը՝ ՀՅԴ Լիբանանի կառոյցին եւ ուղեկից փուլիներուն հետ միասին, այցելեց Լիբանանի մէջ Հայաստան Յանրապետութեան դեսպանատուն եւ յուշագիրով մը պահանջեց Նիկոլ Փաշինեանի հրաժարականը։»

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԾՈՒՐ ԶԻՆՈՒԵՅԱԼ ԵՐԵԲ ԿՈՒՍԱԿԻՐՈՆ ՆՈՐԸՆԾԱՆԵՐՈՎ



Կիրակի, 22 մայիս 2022-ին, յընթացս սուրբ եւ անմահ պատարագին, Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, Նախագահութեամբ Արամ Ա. կաթողիկոսին, ձեռամբ Զիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Թորգոմ Եպս. Տոնոյեանի եւ խարտաւիչակութեամբ ղըպրեվանքի տեսուչ Պարոյր վրդ. Շերեմեանի, տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի շրջանաւարտներէն Զրակ սրկ. Գալայճ-Եանի, Շանթ սրկ. Գատիճեանի եւ Նարեկ սրկ. Ֆիլիքեանի կուսակոմբ թախնայութեան ձեռնադրութիւնն ու օծումը՝ վերանախնուելով Արմէն աթոյ., Առաքել աթոյ. եւ Ազատ աթոյ.։



Կոչեցեալները Աստուծոյ եւ բազմահարիւր ժողովուրդին դիմաց ծուկնի եկած «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» շարականի երգեցողութեամբ հրաժարեցան աշխարհէն, մեղքի կեանքէն եւ իրենց հին մարդէն՝ դառնալով Նոր մարդ՝ Աստուծոյ, եկեղեցւոյ եւ ժողովուրդին նուիրուելով։ Ապա, միառնաթափ Ս. աղանձին խարտաւիչակ հայր սուրբ մայր տաճարի Ս. Երրորդութեան խորանէն բերաւ ձեռնադրիչ սրբազան հօր, որով օծեց Նորընծաներուն ճակատը եւ աջ ու ձախ ձեռքերը։ Արարողութիւնը շարունակուելով տեղի ունեցաւ վեղարի օրհնութեան եւ տուչութեան կարգ։

Շար.ը՝ էջ 6

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՄԻՕՐԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ՝ ՄԱՅԻՍԵԱՆ «ԱՊՐԻԼԵԱՆ ՈՒԳԵԿՈՉՈՒՄ» ՄԸ «ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐՈՒՄ» ՄԵՋ

«Յեղեղասպանութեան ստեղծարարութիւնը՝ յիշողութեան, արուեստի եւ պահանջատիրութեան միջեւ» խորագիրով երիտասարդական միօրեայ սեմինարը շաբաթ, 21 մայիս 2022-ին, Ժիպէլի «Թռչնոց բոյն»-ին մէջ համախմբեց լիբանանահայ աւելի քան 130 երիտասարդներ։

Սեմինարը արգասիքն էր ամփոսներու աշխատանքի մը, որուն մէջ կատարուած ներդրումը միայն Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան եւ կազմակերպիչ յանձնախումբին չէր պատկաներ։ Անկա կը վայելէր Արամ Ա. կաթողիկոսին բարձր հովանաւորութիւնը, «Գալուստ Կիլիկիական» հիմնարկութեան հայկական բաժանմունքի նիւթական աջակցութիւնը,



ինչպէս նաեւ նեցունկն ու օժանդակութիւնը «Թռչնոց Բոյն»-ի տնօրէնութեան եւ տիկնանց յանձնախումբին։

Սեմինարի Նախօրեակին դասախօսներ Լիբանան հասած էին Ամերիկայէն, Չեխիայէն, Զուէթէն եւ Սուրիայէն՝ Լիբանանի դասախօսներուն հետ միասին տղն ձեռնարկին իրենց մասնակցութիւնը բերելու համար։

Զեկուցաբերները թիւով 14 էին, իւրաքանչիւրը՝ իր մասնագիտութեան համապատասխան օրուան նիւթերուն առնչուող հետաքրքրութիւններ ունեցող մարդիկ, իսկ մասնակիցները կու գային իբրեւ ներկայացուցիչներ՝ լիբանանահայ գաղութի տարբեր փուլիներէն, վարժարաններու, դպրեվանքներու եւ համալսարաններու։ Անոնց տարիքը 18-24-ի միջեւ էր։ Սեմինարին իրենց մասնակցութիւնը կը բերէին նաեւ Նախագետ արձանագրուած եւ առնչուող նիւթերուն հաղորդակից դառնալու փափաք ու հետաքրքրութիւնն ունեցող անձեր։

Ինչո՞ւ սակայն կը կազմակերպուէր նման ձեռնարկ մը այս օրերուն, պատասխանը կու գար յանձնախումբի կազմած սեմինարի ծրագիրէն՝ հետեւեալ ձեւով. «Վերոնշեալ հոգեխոցէն ետք պէտք էր բացատրել օտարացումի եւ կործանման գագուսները, եւ «ես»-ի եւ «ինքնութեան» մասին Նոր աւանդութիւններ եւ խօսքներ կառուցել։ Հայութիւնը պէտք է վերակառուցուէր իբրեւ ազգ։ Յեղասպանութիւնը, իբրեւ հաւաքական ցնցող փորձառութիւն, դարձաւ դէպի այս նպատակակէտը առաջնորդող կարեւորագոյն տարրերէն մէկը։ Այնուամենայնիւ, ինքնութեան վերակառուցումը եղած է եւ կը շարունակէ մնալ պայքար՝ միջազգային քաղաքական ուժաբանութեան, գաղթի տարածուող ալիքներու եւ Հայաստանի անվտանգութեան ու ինքնիշխանութեան սպառնալիքներու պայմաններուն մէջ, որոնք կը շարունակեն աւելի բարդացնել արդէն իսկ բազմաշերտ եւ բազմաբնոյթ հայկական սփիւռքի զարգացումը։ Այս պայքարը տեսանելի է ո՞չ միայն մտաւորական մակարդակի վրայ, այլ նաեւ ժառանգութեան եւ մշակութիւնի հայութեան աւելի անմիջական փոխազդեցութիւններուն մէջ։

Այս պատճառով ալ, Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութիւնը, ի պատրաստութիւն 2022-ին Յեղասպանութեան 107-րդ տարելիցի ոգեկոչման ծրագիրներուն, որոշեց փոխան ապրիլեան դասական ձեռնարկի յոյացքին եւ ոճին՝ վերլուծական-քննական մօտեցումով նշել հայ ժամանակակից ինքնութիւնն ու մշակոյթը բնորոշող այս կարեւոր իրադարձութիւնը։

Մասնակիցներուն համար օրը սկսաւ առաւօտեան կանուխ ժամերէն, երբ բոլորը «Շաղոյեան» եւ «Աղբալեան» կերպիւններէն հանրակարգերով ուղղուեցան դէպի Ժիպէլի «Թռչնոց բոյն»։

Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան բարի գալուստի խօսքը ուղղեց Շարիկ Յովսէփեան-Յարութեան եւ յայտնեց, թէ միութեան «անկկա-

լութիւնն է, որ այս սեմինարը վերլուծական մօտեցումով ուսումնասիրէ հայ ժամանակակից ինքնութիւնն ու մշակոյթը բնորոշող մշակութային կարեւոր իրադարձութիւնները, հաւաքական հոգեխոցն ու անկէ բխած անհատական եւ խմբային վարքագիծը, ու վերջապէս՝



իրազէլ դարձնէ լիբանանահայ երիտասարդութիւնը եւ անոր մօտ քաջալերել քննական մտածողութիւնը՝ ընդօժեւելով սփիւռքի ուժի կարողականութիւնը։

Ապա Պարոյր վրդ. Շերեմեան ձեռնարկը կազմակերպող յանձնախումբին բարի գալուստի խօսքին մէջ նշեց. «Կասկածէ վեր է, որ սփիւռքը հայրենիքին ու հայութեան աներեւելի ուժն է։ Ինչո՞ւ աներեւելի. որովհետեւ սփիւռքի մէջ բո-



լորս ալ ստիպուած ենք մեր ապրած երկրին պատկանելիութեան շապիկը հագել, սակայն Էութեամբ ու ինքնութեամբ հայ մնալ, հայ ապրիլ եւ հայութեան համար գործել ու ստեղծագործել։ Սակայն, եթէ ասիկա աներեւոյթ է, այդ չի նշանակեր, որ ան նուազ ուժի տէր է։ Ընդհակառակն, աներեւոյթ աւելի ուժ կրնայ պարունակել, քան՝ երեւելին։ Այսուամենայնիւ, սփիւռքի ուժը զգալի կը դառնայ, երբ մենք յաջողիք այդ ուժը կազմակերպել, համախմբել, արժեւորել եւ քաջալերել։ Ահա, այս պատկերացումով, Համազգայինը կը ներկայանայ անւախընթաց այս սեմինարով, որուն ընթացքին վեր պիտի առնուին սփիւռքի հայկական գրականութեան, երաժշտութեան, կերպարուեստի-տեսողական արուեստներու, սփիւռքեան կառոյցներու եւ համայնքային կեանքի ստեղծարար ոգին եւ ասանդը։ Ան իր խօսքին մէջ նաեւ աւելցուց. «...Որքան մենք յաջողիք վերարժեւորել եւ իմաստաւորել այն, ինչ որ կրցած ենք ընել ու տակաւին կը շարունակենք ընել, այնքան աւելի այդ արժեւորումները խթան պիտի ըլլան, որպէսզի մենք ամրապնդուինք հայ ինքնութեան մեր իւրայատուկ գիծին մէջ, որ յարատեւ ստեղծագործելն ու արարելն է»։

ԵՐԻՏԱՍ ԽՐՈՑԱՆ

Շար.ը՝ էջ 8

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՅՈՅՍՈՎ

Մեծ սպասումներ կային Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններէն։ Չորս տարի առաջ, առաջին անգամ գործադրուելով, ընտրական վերջին օրէնքը ցոյց տուած էր իր անկատարութիւնը եւ ճշգրիտ ներկայացուցչութիւն ապահովելու իր անատակութիւնը։ Նման բացայայտ թերութիւնները բառնալու համար, քաղաքական ուժեր ու կուսակցութիւններ ոչ բնական, Նոյնիսկ հակասական համաձայնութիւններ գոյացուցին ու ընտրական դաշինքներ կազմեցին։ Ժողովրդավարական բնականոն ընտրապայքարի մը ընթացքին, քաղաքական, տնտեսական ու ընկերային հանգիստութիւնները կ'առաջնորդէն ընտրական դաշինքի, այսինքն՝ նմաններու իրերօգնութեան։ Պայքարը կը կատարուի քաղաքական կողմնորոշումներու միջեւ եւ ատուկ իսկ՝ ժողովրդավարական է։ Լիբանանեան քաղաքական դաշտը ժողովրդավարական քաղաքական պայքարը կը խափանէ եւ գայն կ'իջեցնէ մինչեւ ամբոխավարական մակարդակի։

Այսպէս ուրեմն, Լիբանանի մէջ, հակառակ ըսուածին ու կրկնուածին, քաղաքացին պետութեան ղեկավարման ուղղութիւն մը չէ որ կ'ընտրէ, այլ կ'ընտրէ անհատներ կամ անհատներու փոքրաթիւ խումբեր, որոնց վարելիք քաղաքականութեան մասին շատ անորոշ պատկերացում ունի։

2019-ի բողոքի շարժումներէն ետք, ապա Լիբանանը հարուածած իրեայաջորդ տաճկապետներու լոյսին տակ, համատարած աղքատացումի պայմաններուն տակ, կը սպասուէր, որ դասական ղեկավարներու միջեւ պայքարը փոխառիտուէր, գէթ մասնակիօրէն, գաղափարներու պայքարով։ Ծիշդ է, որ ընտրուած 128 երեսփոխաններուն նուազ քան 10 առ հարիւր (13 երեսփոխան), դուրս կը համարուի դասական ղեկավարութեամբ գործող խմբաւորումներն ու սկզբունքով անկախ է, սակայն պէտք է սպասել տեսնելու համար, թէ իրարու հակասող կեցւածքներ ունեցողներու այս խումբը պիտի կարենա՞յ՝ նորութիւն առաջարկող միաձոյլ խմբաւորում մը դառնալ։

Ընտրուած երեսփոխանները առայժմ կարծեք սպասողական վիճակի մէջ են։ Պէտք է ենթադրել, որ անոնցմէ շատերը մտահոգ են ի նախատեսութիւն անկարգավարելի խորհրդարանի մը, անկարող՝ կատարելու օրէնսդիրի եւ գործադիրի կազմութեան եւ աշխատանքին հսկողի իր դերը։ Յառաջիկայ օրերուն եւ ամփոսներուն բազմաթիւ փուլերու հետ ժամադրուած ենք։ Խորհրդարանի Նախագահ, փոխնախագահի ու դիւանի ընտրութիւն, Նոր կառավարութեան կազմութիւն, հանրապետութեան Նոր Նախագահի ընտրութիւն, առանց մոռնալու շրջանաւարտ խորհրդարանին կողմէ անդադար յետաձգուած ելեւմուտական, տնտեսական, ուժանիւթի եւ ընկերային օրէնքները, որոնց ընդունումը պայման է արտաքին օժանդակութիւններու ստացման համար։

Երեսփոխանական ընտրութիւնը չյաջողեցաւ պայծառացնել լիբանանցիին ապրած դժիմ մառնեան։ Ընտրեալներէն կ'ակնկալուի մէկ կողմ դնել սեփական փառասիրութիւնները եւ երկրին դիմագրաւած հարցերու լուծման համար, միասնաբար, ելքեր որոնել։ Այսինքն, անձերէն անկախ, անոնցմէ վեր, գաղափարներ առաջադրել, լաւագոյնին ու յարմարին շուրջ համաձայնիլ եւ տագնապի լուծման ելքեր գտնել։ Այլապէս, Լիբանան կրնայ վերածուիլ կոհակներու միջեւ խուսանաւող Նաւու մը, որ ի վերջոյ դատապարտուած է խորտակման։

Մաղթենք, որ ազգային շահի գիտակցութիւնը եւ քաղաքական իմաստութիւնը կը յաղթանակեն, եւ Լիբանան կ'ուղղուի դէպի ապաքինում։ Լիբանանցի քաղաքացիին սպասումը այս չէ՞ միթէ։

ՏԻԳՐԱՆ ԾԻՆՊԵՆԱՆ

ՊԱՅՏԵՆ. «ՄԻԱՑԵԱԼ . . .»


Շարունակուած Ա. Էջէն

«Արմէնփրես» աւելի ուշ հաղորդեց, որ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց Նախարարութեան բանբեր Նետ Փրայս իր կարգին մամուլ ասուլիսի ընթացքին լրագրողներու յայտնած է, որ Միացեալ Նահանգներ պատրաստ են շարունակելու յարաբերութիւններու կարգաւորման հարցին մէջ Հայաստանին ու Ազրայեճանին աջակցելու, ներառեալ Նաե՛ն՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահ երկրի կարգավիճակին մէջ։

«Արմէնցալ» Նահանգներ կ'ողջունեն Հայաստանի եւ Ազրայեճանի միջեւ երկխօսութիւնը։ Այս ծիրին մէջ մենք կը շարունակենք յանձնառու ըլլալ խթանելու Հարաւային Կովկասի շրջանին համար խաղաղ, ժողովրդավարական եւ բարգաւաճ ապագան։ Մենք հաստատականօրէն կը յորդորենք, որ այս երկխօսութիւնը շարունակուի, եւ կողմերը աշխուժացնեն իրենց դիւանագիտական մասնակցութիւնը՝ օգտուելու գոյութիւն ունեցող ուղղակի փոխադարձ գործակցութեան մեջանիւզմանէն, ձգտելու գտնել համապարփակ լուծումներ Լեռնային Ղարաբաղի տագնապին առնչուած կամ առողջ հետեւանքով յառաջացած բոլոր կարեւոր հարցերու առնչութեամբ, ինչպէս նաեւ կարգաւորելու իրենց յարաբերութիւնները համապարփակ խաղաղութեան համաձայնագիրի կնքման միջոցով։

«Մենք պատրաստ ենք աջակցելու այս հոլովոյթին։ Մենք կը շարունակենք պատրաստ ըլլալ այս ջանքերուն մէջ աջակցելու Հայաստանին եւ Ազրայեճանին, նաե՛ն՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահի մեր կարգավիճակին մէջ», յայտարարած է Փրայս։

ՆՇԱՁՈՂ ԵՒ ԿԱՐՄԻՐ ԳԻԾ



Արցախի վերջնական կարգավիճակին վերաբերել Երեւանի եւ Ստեփանակերտի իշխանութիւններուն մօտեցումներուն եւ դիրքորոշումներուն միջեւ հակասութիւնը շատ յստակ է։ Երեւանի իշխանութիւնները կը խօսին Արցախի վերջնական կարգավիճակին մասին նշանոցը իջեցնելու միջազգային ընտանիքին ակնկալութեան մասին, իսկ Ստեփանակերտի իշխանութիւնները կը շեշտեն կարմիր գիծը, որ կը տեսնեն Արցախի կարգավիճակին պարագային։ Այլ խօսքով, Ստեփանակերտ Արցախի կարգավիճակը կը համարէ կարմիր գիծ, զոր կարելի չէ հատել։ Իսկ Երեւան կը խօսի նշանոցի իջեցման հաւանականութեան մասին, որպէսզի ստանայ միջազգային ընտանիքին զօրակցութիւնը։

Արցախի կարգավիճակի որոշման խնդիրը արցախեան երկրորդ պատերազմէն առաջ կը կոչուէր Արցախի անկախ հանրապետութեան միջազգային ճանաչման ապահովման խնդիր։ Պատերազմէն ետք Արցախի պետութիւնը հասկացողութիւնը փոխուեցաւ եւ ստացաւ «Արցախի կարգավիճակ» եզրը, որ ինքնին անկախ պետութեան զաղափարէն եւ նպատակէն յստակ նահանջ է։ Հոս է, որ հարցին տարբեր երեսները երեւան կու գան։ Ինչպիսի՞ կարգավիճակ պիտի ապահովուի Արցախի, որուն իշխանութիւնները յստակօրէն կը մերժեն Ազրայեանի կազմին վերադառնալու քաղաքական որէն որոշում եւ կարգադրութիւն։ Այս կեցածքը շեշտեց Արցախի արտաքին գործոց նախարար Դաւիթ Քաբայեան, որ ահագանգ հնչեցուց բնաջնջման իսկական վտանգին մասին, զոր արցախցիները պիտի դիմագրաւեն, եթէ քաղաքական սակարկութիւնները Արցախը վերադարձնեն Ազրայեանի իշխանութեան տակ։ «Անշուշտ Արցախի ժողովուրդին ապահովութեան երաշխաւորութիւնը եւ Արցախի կարգավիճակ մը տալը լաւ է։ Բայց խնդիրը այն է, թէ ինչպիսի՞ ապահովութիւն եւ կարգավիճակ պիտի տրուի։ Այսինքն Ազրայեանի կազմին մէջ Արցախի կարգավիճակը չի կրնար երաշխաւորել արցախցիներուն ապահովութիւնը։ Ընդհակառակը, Արցախի եւ արցախցիներուն գոյութիւնը պիտի դրուի հարցականի տակ։ Պատերազմ, կոտորած, հայաթափում եւ ցեղասպանութիւն», ահագանգեց Արցախի արտաքին գործոց նախարարը, որուն համաձայն, խաղաղութեան օրակարգին մա-

սին խօսիլը չի նշանակեր ընդունիլ Արցախ մը Ազրայեանի իշխանութեան տակ։

Երեւանի իշխանութիւնները այսքան յստակ կեցուածք չունին կամ չեն ցուցաբերեր Արցախի կարգավիճակին մասին։ Ազրայեանի կողմէ Հայաստանի փոխանցումած հինգ առաջարկներուն տրուած վեց կետերէ պատասխանին մէջ իսկ Արցախի վերջնական կարգավիճակին մասին Երեւանի իշխանութիւններուն կեցուածքն ու դիրքորոշումը անորոշ ձեւակերպում ունի, ինչ որ խորհրդարանական ընդդիմութիւնը մղեց լուրջ կասկածի տակ առնելու Արցախի կարգավիճակին նկատմամբ Երեւանի իշխանութիւններուն քաղաքականութիւնը։ Վերջերս պաշտօնի կոչուած յատուկ յանձնարարութիւններով դեսպան Էդմոն Մարութեան, որ նախկին ընդդիմադիր մըն է, յայտարարեց, որ՝ «Հայկական կողմին համար հիմնարար է Լեռնային Ղարաբաղի հայերուն ապահովութեան երաշխաւորումը, անոնց իրաւունքներու եւ ազատութիւններու յարգումը, ինչպէս նաեւ՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշման հարցը»։

Իրենց պատասխանին մէջ Երեւանի իշխանութիւնները պատրաստակամութիւն կը յայտեն սկսելու բանակցութիւններու՝ Հայաստանի եւ Ազրայեանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման եւ միջպետական յարաբերութիւններու հաստատման համար, ՄԱԿ-ի կանոնադրութեան, քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքներու միջազգային դաշնագրի եւ Յելսինքեան եզրափակիչ **աքթին** հիմամբ։ Ըստ Մարութեան, այս կետին մէջ ամրագրուած են ժողովուրդներու ինքնորոշման իրաւունքը եւ այլ կարեւոր իրաւունքներ ու ազատութիւններ։

Ընդդիմութիւնը, սակայն, այլ տպաւորութիւն ունի։ Արցախցիներու ինքնորոշման իրաւունքին հիման վրայ Արցախի կարգավիճակին ըննարկում կատարելու վերաբերելու ոչինչ յստակացնելով՝ Երեւանի իշխանութիւնները, ըստ ընդդիմութեան, կը ըողարկեն Արցախը Ազրայեանի կազմին մէջ տեսնելու իրենց միտումը։ Իսկ Ստեփանակերտի իշխանութիւնները յըստակացուցած են իրենց կեցուածքը, որ բարեբախտաբար հայութեան ջախջախիչ մեծամասնութեան կողմէ որդեգրուած է։

Ա. Ա.

ՍՓԻՒՌԵԻ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՐԲ Է...

Փոքր հարցումներով չէ, որ պիտի սկսիմ այս նիւթին, որովհետեւ մեր ժողովուրդին համար իսկապէս գոյութեանական մեծ ժամանակներ կ'ապրին։ Ու մեծ իրադարձութիւններու առթիւ, ամենէն աւելի թիրախ կը դառնայ մեր գոյութիւնը, որ նետուած է համայնակով աշխարհի մը մէջ։ Մենք ալ կը հալիք այս մեծ հալոցին մէջ, ուր լեզու, աւանդութիւններ, պատմութիւն, անցեալ եւ ճակատագիր իրարու դէմ կը մարտնչին եւ մեզ կը նետեն «կորստեան թոյնը»-

ու մէջ։ Այսպիսի խորագիրով կարճ պատմը- Լաճնէրու հատընտիր մը ունէր մեր արեւելեան հեռագած եւ իր սիրելի հողին մէջ յաւիտեանութեան պառկած լիբանանահայ խմբագիր Պօղոս Սևապեան։

Մեր իրականութեան մէջ կան խմբագիրներ, որոնք ապագայատեսիլ երանգ մը ունին, բայց եւ այնպէս, այդ ապրումին մէջ անոնց գեղարուեստական կոթող մը «հասցնելու» ճիգը կը կաղա։ Սևապեան անոնցմէ էր։ Մարդը մեծ քննադատ է, ուրդին գրադատական էջեր ունի, ապագայի զարկերակը բռնելու մեծ ընդունակութիւն, բայց եւ այնպէս, իր ձգած ժառանգութեան առթիւ, անոր գեղարուեստականութիւնը տեղի կու տայ մեծ խմբագիր մը ըլլալու հանգամանքին։ Տուած է գեղեցիկ պատմը- Լաճնէր, գրած է խմբագրականներ, ստորագրած է պատումներ ու ամենակարեւորը՝ հասցուցած է մեծ սերունդ մը, որուն անդամներուն մէջ եղած են ու դեռ ալ կան երեւելի կարգ մը անուններ։

Անցանք։ Հոս չէ խնդիրը։ Խնդիրը Սևապեանի «Կորստեան թոյնը» խորագրեալ հատորին խորագիրն է, որ շատ հաւանաբար միղում առած ըլլայ սփիւռքի մէջ ապրելու անպատեհ վիճակներէն, էութեանական հարցադրումներէն ու մեր հաւաքական ճակատագրին մասին ընկալումներէն։ Սևապեան սփիւռքի մէջ ապրիլը գուցէ կորուստ կը համարէ, հոն մեզի տուածը, մեր ապրումը, մեր կեանքը, մեր լեզուն հաւանաբար թոյն կը համարէ։ Ի՜նչ իմանաւ։ Այդ գործը ես չեմ կարողացած, բայց ճանչնալով իր ժամանակն ու այն մթնոլորտը, ուր Սևապեանը, իր սերնդակիցները գրականութիւն ստեղծեցին կամ ստեղծել փորձեցին, քաջ վստահ եմ, որ այդ մարդիկ ինչ-ինչ պատճառաբանութիւններով չէին սիրեր սփիւռքը։ Սիրել-չսիրելու հարցը, անշուշտ, երկրորդական է, ու այդտեղ դրուած շեշտը կը վերաբերի մեր համընդհանուր կորուստին, զոր ինքն ու իր սերնդակիցները երեւի գզացած են։ Իրաւացի՞ էին անոնք, ճի՞շդ էին գուցէ, չեմ գիտեր, չեմ ալ ուզեր պատասխան մը տալ այն մեծ դժգոհանքներուն, որոնք ամեն տեղի եւ ամեն մայրէ լսելի կը դառնան ու կը հասնին Երեւանի իմ անկիւնս։ Այն է՝ «Սփիւռքը արդէն պիտի մեռնի» կամ «Զըսի՛Նք քեզի, չէի՛Նք ըսած քեզի, որ սփիւռքը գնայուն է եւ հայրենիքն է մնայունը...»։

Այս հեղեղի նման դիտարկումներուն մէջ տեղ մը երեւի իրաւացիութիւն մը կար, կար նաեւ ընկալում մը, ըստ որուն, ամեն ինչ պէտք է ընենք, որպէսզի մեր ետին փակեցն սփիւռքի մեծ ու փոքր բոլոր տեսակի դռներն ու պատուհանները եւ ամեն ինչ մէկդի դնենք ու հասնինք հոս՝ Երեւան։ Այլ խօսքով, սփիւռքը «լուծարենք», անոր հաշիւները «փակենք» ու մեր վրայ եղած պարտքերը տանք եւ մեր բաժնի մնացած ստանալիքները ստանանք ու... հեռանալը։

Կար այդ վիճակը՝ մասնաւորապէս Հայաստանի անկախութեան առաջին տարիներուն։ Իբրեւ հետեւանք սփիւռքը մեծ հաշուով ապրեցաւ «հոգեւորում» մը՝ մինչեւ այն պահը եւ այն մեծ համոզումը, թէ սփիւռքը յաւիտեանական արժէք մըն է ու պէտք է, հարկ է գալն պահել, ջրէլ անոր կանաչազարդ ծառերը, բանալ անոր ակօսները ու մանաւանդ՝ օգնել, որպէսզի անոր առունները ճիշդ տեղ հասնին ու մեզի տան միախառնութիւն եւ բերկրալի միողեր։ Անցաւ այդ փուլն ալ, իսկ այսօր ահա բացուած է նոր ժամա-



նակ մը, որ բոլորիս համար պարտաւորեցնող է։

Հայ ժողովուրդի դաստակին ժամացոյցի սլաքները վերջին անգամ «բոցավառեցան» 10 Նոյեմբեր 2020-ին, երբ Հայաստանի խայտառակ իշխանութիւնները, իրենց «գլխադիր» առաջնորդով հանդերձ, ամէն ճար, ամէն յոյս եւ ամէն տեսակի խաբկանք «սպառնելով» ընդունեցին ստորագրել Նոյնքան խայտառակ, Նոյնքան անփառունակ եւ Նոյնքան պարտաւորական թուղթի մը տակ, որ մեր բոլորին համար բացաւ այսօրուան Հայաստանի այդքան մերկ ու տխուր պատկերը։ Գուցէ այդ օրէն ետք է նաեւ, որ սփիւռքի մէջ իրենց գոյատեւման համար մեծ եռանդ ապահոված եւ ամէն օր «հայասպանութիւն-ծուլում»-ին դէմ պայքարելու մասին մտածող մարդիկ եկան այն եզրակացութեան, որ առնուազն այս ժամանակներուն եւ ի գին ամէն տեսակի զոհողութիւններու՝ սփիւռքը Հայաստանի չափ կարեւոր ու կենսական է, եւ սփիւռքը պէտք է ապրի։ Վիրաւոր, մահաւան առաջատարներուն տրուած Հայաստանին եւ ի մասնաւորի Արցախի քաղաքացիական պայքարին մէջ։ «Կորստեան թոյն»-ը եւ մեծ հարցադրումներու առաջնորդող անորոշութիւնը Նոյնքան կը հարուածէին սփիւռքի գոյութեան «մեծ շէնք»-ը։ Բարդալուծման դուրս գալու համար հաւանաբար ճիշդ էր մտածել ելքերու մասին ու հասկնալու համար, թէ ի՜նչ կարելի է փրկել, ինչպէ՛ս կարելի է փրկել ու ինչպէ՛ս կարելի է յառաջ երթալ։ Այս միջոցին եր նաեւ, որ սփիւռքի հայրենական կարեւոր կեդրոնները, որոնք մինչ այդ մեծ պայքար կը տանէին համավարակի դէմ, կամայ-կամայ սկսեցին դուրս գալ «պարտադրուած» թմբիրէն ու հաւաքուիլ նոր գաղափարներու ընդհանուր պրիսմակին մէջ։ Ու այս ճիգին մէջ երեւելի կը դառնար դարձեալ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի կոչ-յայտարարութիւնը, որ կերպով մըն ալ կ'աւետէր, որ վերջը նկարագրուած «հոգեւորում»-ի ժամանակը արդէն աւարտած է, եւ սփիւռքը կը մտնէ նոր փուլ մը՝ իր ողջ էութեամբ։

Հարցումներու, տագնապի, գոյութեան եւ իմաստի որոնումներու կողքին, կային արդէն մարդիկ, որոնք մինչ այս յայտարարութիւնը երեւելի գործ տարած էին հարցումներու տրցակ մը հրամցնելով սփիւռքի ամենատարբեր կետերուն վրայ ներկայ, տագնապող մարդոց, որոնք կը համարուին մասնիկը «սփիւռքահայութեան» մեծ պատառին։ Այդ աշխատանքի հետամուտներու շարքին է Անգլիա հաստատած ծանօթ մատուցական տղայը. Հրաչ Զիլիկիոյեան։ Ինչպէս վերը նշեցի, անցեալ տարիներուն իր ակադեմիական գործունեութեան կողքին, ան զարկ տուած էր նախաձեռնութեան մը, որուն նպատակն էր հարցախոյզներու միջոցով կազմել «քննական» կարծիք մը՝ սփիւռքը յուզող խնդիրներուն եւ առիտաւորակ սփիւռքահայութեան ընկալումներուն մասին։ Այս կարեւոր ծրագիրը կ'իրականացուէր «Գալուստ Կիւպլեկեան» հիմնադրի հայկական համայնքներու բաժանմունքին աջակցութեամբ։ Ստորեւ մեր քաղած-ներկայացուցած հարցազրոյցը հատուած մըն է մօտաւոր անցեալին Նիւ Ճորճի կատարած աշխատանքային այցելութեան օրերուն «Բաբել» ռատիոյին տուած հարցազրոյցն։

ՍԱԳՕ ԱՐԵՆՆ

Շաբ.ը՝ էջ 6

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԻ ՊԱՀԱՊԱՆՆ ՌԻ ԳԻՏԱԿԸ՝ ԽՈՐԷՆ ՊԱՆԵՆ

Նա ծնուել էր Լիբանանում, 1935 թուականի մարտի 10-ին, սփիւռքի բազմամեայ մանկավարժ եւ հասարակական գործիչ Յարութիւն Պալեանի ընտանիքում։ 1946 թուականին նրանց ընտանիքը հայրենադարձուելու էր Հայաստան, եւ նրանց կեանքի այդ դրուագը ճակատագրի պարգեւ էր լինելու մի ամբողջ ազգի համար։ Խորէն Պալեանը աւարտելու էր Ս. Էջմիածնի Գեորգեան հոգեւոր ճեմարանը, 1955 թուականի դեկտեմբերին մայր տաճարում ձեռնադրուելու էր ասրկաւագ։ Իսկ 1961 թուականին Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրուելու էր կուսակոթն քահանայ։ 1962 թուականին Օշականում պաշտպանելու էր վարդապետական աւարտաճառ եւ ստանալու էր վարդապետական չորս աստիճաններ։ Խորէն Պալեանը կարող էր լինել եկեղեցական նշանաւոր գործիչ, համալրել նաեւ եպիսկոպոսաց դասը։ Սակայն Խորէն Պալեանին վիճակուած էր դառնալ մեր միջնադարեան շարականներն աշխարհին ներկայացնողը։ Իսկ Լուսինէ Չաքարեանի պէս ոգեղէն անհատականութեան հետ ամուսնութիւնը դառնալու էր մեր մշակութային կեանքի մը մի գանձ, մի երեւոյթ։ Խորէն Պալեանը միջնադարեան ճգնադրների պէս ամբողջ կեանքում միջնադարեան ձեռագրերից պեղեց ու վեր հանեց շարականները։ Ու ինքն էլ դրանց կատարողն էր. շուրջ 1800 շարական, որը նրա բացառիկ ֆենոմենի դրսեւորումն էր։

Հոգեւոր երգիչ, մանկավարժ, շարականագետ, ծիսագետ, բանասէր, գրաբարագետ Խորէն Պալեանը այս տարուան մարտի 10-ին կը դառնար 87 տարեկան։

Եզնիկ Կողբացի 42/3։ Ահա այս հասցեում երկար տարիներ՝ մի յարկի տակ ապրել ու ստեղծագործել են երկու առիւնը արուեստագետներ՝ Խորէն Պալեանն ու Լուսինէ Չաքարեանը,



որոնք եղան հայ միջնադարեան հոգեւոր երգի պահապանն ու սերունդներին փոխանցողը։ Զանի՛ քանի՛ հանճարեղ արուեստագետների են հիւրընկալել այս տան պատերը, որոնք ամենայն ժամ լսել են հայ հոգեւոր երգի նուիրելիների կատարումները, նրանց աղօթքները։

Մօտ երեք տարի առաջ այս հասցեում բացուեց «Լուսինէ Չաքարեան» տուն-թանգարանը, որը սրբազան երկիւղածութեամբ պահում ու պահպանում է Լուսինէ Չաքարեան-Խորէն Պալեան զոյգի երկար տարիների մտերմ ընկեր, փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր, ԵՄԽԵՍԵՔՕ-ի Բիւրիլիայի ամբիոնի (Հայֆա) հայաստանեան մասնաճիւղի վարիչ Սուսաննա Դաւթեանը (ի դէպ, Հայաստանում փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր երեք կին դոկտոր կա, որոնցից մէկը նա է), մի նուիրեալ հայուհի, որ երկար տարիներ նուագակցել է Խորէն Պալեանին, երբեմն-երբեմն էլ՝ նաեւ Լուսինէ Չաքարեանին (բուհերում, գործարաններում, շրջակայքներում)։ Անցեց այս հասցեով եւ ամեն պահի կը լսեք սերունդների համար արժէք դարձած երկու մեծագոյն արուեստագետների ծայնը, նրանց կատարումները, որոնք ապրեցնում են ամեն հայի։

ՅԱՍՄԻԿ ՊՕՐՈՍԵՆՆ


Շաբ.ը՝ էջ 6

ԱՆԴՐԱԴԱՐԶ

2022 ՍՓԻՒՌՔԻ ՏԱՐԻ - Դ.

ԻՆՉՈ՞Ւ ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ՎՐԱՑԵԱՆԻՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՀՕՐՄ ՍՓԻՒՌՔԸ ՎՏԱՆԳՈՒԱԾ ԶԷՐ - Բ.

Սիմոն Վրացեանին ընտանիքը Նոր Սայա՝ իրենց գիւղը կը վերադառնայ, ուր Սիմոն թեմական վարժարանը կը յաճախէ, եւ այնտեղ դասընկերոջ մը հրաւերով կուսակցական կը դառնայ: Սակայն, առաջին անգամ ժողովատեղիին հասցեն սխալելով, փոխանակ հնչական գործիչին դուռը զարնելու՝ դաշնակցականին դուռը կը զարնէ, հոն ալ կը մնայ եւ այդպիսով դաշնակցական կը դառնայ: Եթէ ռուսական Տիմաշուկա գիւղը մնային, Սիմոն իր պատանեկութեան երկուստեք առաջին սիրոյն՝ ռուս Մարիային հետ պիտի ամուսնանար, եւ իր կեանքը բոլորովին այլ ընթացք կրնար ունենալ (1):



Սիմոն Վրացեանին նախահայրերուն գաղթերը. 1319-ին Անիէն հորիմ, ապա 1778-ին, Նոր Նախիջեան եւ իր ուղեւորութիւնը Հայաստան՝ 1900-ին: Հեռաւորութիւնները այժմու ցածրաբային ճամբով՝ ըստ «Կուկըլ քարտէսին»:



Հօրս տունը (նկարին վարի մասին մէջ, ճերմակ քառակուսի), Այնթապի հայկական Հեյկի թաղամասի Սողանը Պուճաղը փողոցին մէջ (2016-ին, «Կուկըլ արքանականային նկարով»), ուրկէ թուրք կառավարութիւնը տեղահան ըրաւ մեր ընտանիքը եւ՝ Արեւմտեան Հայաստանի ու Փոքր Ասիոյ ամբողջ հայութիւնը:

Թեմական վարժարանը ւարստելուն առիթով, իր ուսուցիչին՝ տեսուչի օգնական Վահան Զիրեանի ճիգերուն շնորհիւ, Վրացեան երկրորդական ուսման համար շուրջ 1200 քմ. հաւրա՝ Էջմիածին Գեորգեան ճեմարանը կը դրկուի՝ իբրեւ գիշերօթիկ աշակերտ եւ ապագայ կղերական: Զիրեանի կարգադրութեամբ՝ Նաեւ, Սիմոն Նախ տեղւոյն Գեորգ Զեօրեքեան սարկաւազին քով (ապագայ կաթողիկոս) ճեմարանի համար Նախապատրաստական դասերու կը հետեւի:


Ահաւասիկ՝ Սիմոնը յանձնառու հայ պահող ազգակներուն շղթան. Նախ՝ ազգային աւանդապաշտ եւ եկեղեցասեր ծնողքը, ապա դպրոցը, ապա իր պատանեկութենէն սկսեալ կուսակցական պատրաստութիւնը եւ վերջապէս՝ աշակերտին ուսկուրիւնները քաջալերող եւ ուղղորդող հայ ուսուցիչը: **Տուն, եկեղեցի, դպրոց եւ Ակումբ՝ ՏԵՂԱ** (շարքը կարելու չէ, պարզապէս անելի լաւ կը հնչէ): Վրացեան իր ետին թողուց պատմական եւ յուշագրական արժեքաւոր գիրքեր, որոնց գումարը քանի մը հազար տպագիր էջեր կը բաղկանայ, Նաեւ իբրեւ գնաւազան օրաթերթերու խմբագիր եւ աշխատակից՝ բազմա-հարիւր յօդուածներ գրած է, երբեմն՝ առօրեայ դրութեամբ:

Նոր Սայայի եւ ցարական Ռուսիոյ տիրապետութեան տակ գտնուող հայկական եկեղեցիներուն եւ դպրոցներուն այս դրութիւնը, սակայն, երկրորդ անգամ մեծ հարուած կը ստանայ, երբ 3 յուլիս 1916-ի որոշումով, փոխարքայ Նիքոլայ Նիքոլայեւիչը Կովկասի շրջանը կը վերածէ հայութեան դէմ բռնակալութեան՝ ռուսացումի քաղաքականութիւն պարտադրելով (2): Առաջինը 1885-ին էր, երբ Կովկասի փոխարքայ Ալեքսանտր Տոնտուրով Զորսաբով հրամայեց փակել բոլոր հայկական թեմական վարժարանները, փոխարինելով զանոնք ռուսական վարժարաններով: Թէեւ յաջորդ տարի վերաբացուեցան հայկական վարժարանները՝ սակայն կը քաջալերուէր ուսուցանել ռուսերէնը՝ հայերէնի փոխարէն: Այլ դրսեւորում էր Նաեւ Հայ առաքելական եկեղեցւոյ կալուածներուն բռնագրաւումը ու որեւէ հայկական ազգային երեւոյթներուն եւ կուսակցութիւններուն դէմ հալածանքը (3):


Ուրեմն, Վրացեանին ընտանիքը եւ իրենց նման ցարական ռուսական տիրապետութեան շրջանի հայերը, արդէն 1885-էն ետք, հակառակ պետական սեղմումներուն եւ հալածանքին՝ պահեցին հայ ազգային եկեղեցին, դպրոցը եւ մշակոյթը՝ ՏԵՂԱ-ն: Ակումբը ըսելով՝ կը հասկնանք հայ ազգային, մշակութային, բարեսիրական, մարզական, հայրենակցական, տոհմիկ, քաղաքական-կուսակցական, ընկերային, տիկնանց եւ այլն հայերու հաւաքավայրը:

1917-էն սկսեալ պոլշեկական յեղափոխութիւնը եկաւ քնշելու ազգային պատկանելիութիւնները, եկեղեցին ու կրօնը եւ իրենցմէ զատ՝ միւսներուն կուսակցութիւնները: Իսկ Հայաստանի խորհրդայնացումով փորձանքներուն վրայ աղետ մը եսաւեցաւ. անոնք աղաւաղեցին հայոց լեզուն ստեղծելով Նոր ուղղագրութիւն մը, որպէսզի Նոր սերունդը դժուարութիւն ունենայ անցեալին հետ կապ պահելու՝ հայոց պատմութիւնն ու գրականութիւնը կարդալու, իրացնելու, եւ մանաւանդ՝ բաժանում մը ստեղծելու խորհրդային միութենէն դուրս ապրող «ազատ աշխարհի» հայութեան հետ:

Համայնավարները եկեղեցիները փակեցին կամ քանդեցին: Վրացեանին տեսածներէն, 1792-ին բացուած, Նոր Նախիջեան-Լ-անի Ս. Խաչ եկեղեցին փակ մնալէ ետք, 1972-ին թանգարանի վերածեցին եւ միայն 2000-ին, իբրեւ եկեղեցի, համայնքին վերադարձուցին: Իսկ պատմական Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ 1965-ին համայնավարներուն կողմէ քանդուած էր, շնորհիւ ռուսահայ Կարապետեան եւ Դազարեան ընտանիքներու բարերարութեան՝ Նոյն վայրին մէջ Ս. Յարութիւն եկեղեցին կը կառուցուի, որուն օծումը տեղի կ'ունենայ 29 մայիս 2011-ին: Եւ ինչպէս Նախորդ մասով տեսանք, այս եկեղեցւոյ կից կը բացուի դպրոց եւ հայկական մշակութային ակումբ՝ «Հայորդեաց տուն»: Ուրեմն ՏԵՂԱ-ն սկսած է վերականգնել Ռոստովի այժմու համայնքին մէջ: Սակայն յստակ չէ, թէ այս աշակերտները Հայաստանէն Նոր գաղթողներու՝ զաւակներն են, թէ՛ խառն, բնիկներու եւ Նորերու: Կը յուսանք, որ այս օրինակը Նախկին խորհրդային բոլոր հայկական համայնքներուն համար վարակիչ կը դառնայ թէ՛ բնիկներուն եւ թէ՛ ալ Նորերուն:



Չախէն երրորդը՝ Մեծ հայրս՝ Նազարէ եւ իր եղբայրները՝ Յակոբ, Մանուէլ եւ Յովհաննէս, Տեղասպանութեան օրերուն՝ 1915-ին:




Հօրս՝ Գրիգոր Զեքիծեանին 1929-ին արծաթ թելով շինած գարդաստեղներուն իր գծագրութիւնները, որ պատրաստած էր հայկական ոսկերչութեան եւ Պերլութի երբեմնի ոսկերիչներու շուկային մասին ցարդ անտիպ իր շուրջ 600 ձեռագիր էջ եւ շուրջ 40 թերթ նկարներով գիրքին համար:

Հայրս (1912-1990) Հալէպի գաղթականներու հիւղաւանին մէջ պատանի տարիքին, մտնողի պակասին պատճառով, երկու տարի անկողիկի ծառայելէ եւ մահամերձ վիճակէն ապաքինելէ ետք, հիւղաւանին մօտակայ, «Թելսիզ թելեֆոն» կոչւած դաշտին մէջ կը միանայ իրեն նման ոսկերչի աշակերտներու թաղային «Համագասա» ֆութպոլի խումբին, որ «դաշնակցականներուն» խումբը կը նկատուէր: Հակառակ մօրեղբօրը բողոքին՝ իր հօր եւ մօրն իսկ հրահանգով, հայրս ոչ թէ միայն կը մնայ ֆութպոլի այս խումբին մէջ, այլեւ մօրեղբօր բողոքի օրն իսկ կ'անդամակցի դաշնակցական պատանեկան միութեան եւ այդպէս ալ կը մնայ մինչեւ կեանքին վերջը: Մեծ մայրս՝ Արաքսի Զեքիծեան, եկեղեցասեր ու հաւատացեալ էր, ան միսիոնարութիւն Աննա Հետուիկ Պուլի (Anna Hedwig Buhl) օգնականներէն՝ «Մայրիկ»-ն էր, տես՝(4), (5):

Հայրս հայկական մանկապարտեզը եւ Նախակրթարանի քանի մը տարիները Այնթապի մէջ անցնելէ ետք, ուր ամէն առաւօտ պարտադիր թրքերէն եւ թրքական «հայրենասիրական» երգեր կ'երգէին, Հալէպի Ալեքիֆօ քոլեճին մէջ միջնակարգ ուսում կը ստանայ, ապա կը մտնէ գործի ապարեգ: 1929-ին, արդէն 17 տարեկանին, ոսկերչական Նուրբ գործեր (չիֆթի՝ ունելիկ գործ) կ'արտադրէր՝ արծաթէ թելերով թիթեռնիկներու եւ այլ տեսքով զարդաստեղներ շինելով: Ինքնուրուցումով մանկութիւն եւ ջուլպէ կը նուագէր Նաեւ, որեւէ այլ լարային նուագարան՝ կիթառ եւ այլն կրնար նուագել:

Անյազ ընթերցասիրութեամբ յեղափոխական գրականութիւն, վէպեր, «Ազգակ», «Դոշակ» եւ այլ գրական պարբերութիւններ կարդալով՝ բաւական լաւ հայերէն գրելու եւ շարադրելու մակարդակ ունեցաւ եւ 1975-էն սկսեալ, ձեռագիր հազար էջ անելի իր յուշերը գրեց: Այս յուշերն՝ Այնթապի մասին գրածներէն փոքր մաս մը լոյս տեսաւ «Նոր Այնթապ» պարբերականին, ուր թիւերուն մէջ (1980-1992): 1960-ական տարիներուն «Ազգակ»-ին մէջ ալ գրութիւններ ունի, «Լիբանանցի» ծածկանունով, որոնցմէ երկրորդին խորագիրն է՝ «Խապրիկ-ներ խորհրդային երկիրներէն»:

Ահաւասիկ իօրս յանձնառու հայ մնալու պարագային ալ ՏԵՂԱ-ն գործօն դեր ունեցած էր, ուր Վրացեանին նման՝ մայրն էր մղիչ ուժը: Սակայն, կարեւոր տարբերութեամբ մը: Իրենց



Սիմոն Վրացեանին «Հայաստանի Հանրապետութիւն» եւ «Կեանքի ուղիներով» 6 հատոր գիրքերը:



Հօրս անտիպ յուշերուն հազարէ անելի ձեռագիր էջերով 40 տետրակները:

հայ ըլլալուն պատճառով ցեղասպանութեան ենթարկուած, հրաշքով փրկուած ու թուրք կառավարութեան եւ թուրքերուն վայրագութիւնն ու թալանը տեսած, դրացիներուն եւ ազգականներուն դաժան սպանութիւնը տեսած ու իրենց տուններէն եւ քաղաքներէն բռնի կերպով տեղահանուած գաղթականներուն հայկական ինքնութիւնը քարոզելը ուղղակի անհեթեթութիւն պիտի ըլլար: Այս վերապրող սերունդին հայ ազգային պատկանելիութիւնը երբեք վտանգուած չէր:

Խիստ կարեւոր էր, որ աշխարհի տարածքին, մինչեւ Զինաստան եւ Ամերիկաները հասած, ցիրուցան այս պարտադիր գաղթական դարձած ժողովուրդը պէտք էր հաւաքուէր, ինչպէս ստանար ու կազմակերպուէր՝ իբրեւ հայկական սփիւռք, հայ մնալու՝ պատմական ժառանգութիւնով, լեզուով, մշակոյթով՝ երգով, պարով, երաժշտութիւնով, խոհանոցով, աւանդութիւններով եւ հաւատքով՝ միշտ նպատակ ունենալով վերատիրանալ իրենցմէ բռնի կերպով խլուած Արեւմտահայաստանին, գիւղերուն, քաղաքներուն, տուններուն ու կալուածներուն:

Ահա հոս է, որ զանազան մակարդակներու վրայ, հայկական կուսակցութիւններուն կողքին, Նաեւ հայկական ինքնաբերական իրերօգնութեան կազմակերպական մեքենան սկսաւ աշխատիլ, որպէսզի այս Նոր գաղթավայրերուն մէջ ՏԵՂԱ-ներ ստեղծուին: Ինչպէս Ա. մասին մէջ տեսանք, Զինաստանի պարագային, Նախ «հայկական կոմիտէներ» կազմուեցան, որոնք բնագոյրքայ եկեղեցի ունեցան, որուն համար դպրաց դաս ունեցան, դպրոց եւ երգչախումբ յառաջացուցին, հաւաքուեցան ու իրարու տըր կանգնեցան եւ հայկական այլ համայնքներու հետ կապ հաստատեցին, որպէսզի իբրեւ հայ ապրին, եւ մեր ազգը գոյատեւէ:

Առիթը չեմ ունեցած Վրացեանին հանդիպելու, սակայն վերոնշեալ բոլոր յուշերը, գիրքերը եւ մամուլին մէջ՝ 1918-1922, շատ մը գրած յօդուածները կարդալով՝ անոր ծանօթացած եմ, իսկ երկրորդը արդէն հայրս էր: Սփիւռքահայու երկու տեսակ՝ իրարմէ շուրջ 2500 քմ հեռու եւ իրարմէ շուրջ 30 տարի տարբերութեամբ ծնած, այս երկու տարբեր օրինակները ցուցանիշներ ունին, որոնք կ'օգնեն հասկնալու եւ ծրագրելու սփիւռքի մէջ հայ մնալու լաւագոյն ընթացքը: Նշենք կարգ մը երեւոյթները.

- 1.- Երկուքն ալ ազատ, անկախ Հայաստանի մէջ ծնած էին, բայց իբրեւ հայ մեծցան ու ապրեցան:
- 2.- Երկուքն ալ, հակառակ հայկականութեան դէմ պետական-վարչական հալածանքի, հայ դպրոց յաճախեցին եւ հայեցի կրթութիւն ստացան:
- 3.- Երկուքն ծնողներն էին, որոնք դէպի հայ վարժարան եւ, իօրս պարագային, հայկական կուսակցութեան անդամակցութեան մղեցին:
- 4.- Երկուքն ալ պատանի տարիքին հայ կազմակերպութեան մը՝ կուսակցութեան անդամակցած էին, այս պարագային՝ ՀՅԴ:

ՅԱՐՈՒԹ ԶԷԽԵՏԵԱՆ

Շաբ.ը՝ Էջ 6

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԼԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ...

Շարունակուած 3-րդ էջէն

Ձեռնադրեալ հայր սուրբերուն կնքահայրութիւնը ստանձնած էր Արեւմտեան թեմի Ազգային վարչութեան ատենակալետ տէր եւ տիկին Վահէ եւ Յասմիկ Յովակիմեան զոյգը։ Օծումէն ետք, մկրտարանին մէջ, ձեռամբ կնքահօր, կատարուեցաւ լուացումը երեք նորած ըսհականներուն ճակատներուն ու ձեռքերուն։

Ձեռնադրիչ սրբազան հայրը, նուիրեալները օծելէ ետք, յաւուր պատշաճի քարոզէց։ Աստուծոյ փառք եւ գոհութիւն յայտնելէ ետք, ան իր խօսքը ուղղելով վեհափառ հայրապետին, որդիական երախտապարտութիւնը յայտնեց, որ ան իրեն դարձեա՛լ առիթը ընծայեց պատարագելու մայր տաճարի Ս. սեղանին վրայ եւ այս անգամ օծելու հայ եկեղեցւոյ նուիրեալ երեք նոր ուժերը։ Այս առիթով, ձեռնադրիչ սրբազանը շնորհատրեց վեհափառ հայրապետը, միաբանութիւնը, տէր եւ տիկին Յովակիմեանը, նուիրեալներուն ծնողները եւ ժողովուրդը ամբողջ։

Իր խրատական խօսքը ուղղելով նորընծաներուն՝ սրբազանը ըսաւ. «Դուք այլեւս չ'էք պատկանիր ձեր անձին, այլ կը պատկանիք բոլորին։ Ան, որ եղբայր է Զրիստոսի, ձեր եղբայրը կը դառնայ այսօր. ան, որ մայր է Զրիստոսի, ձեր մայրը կը դառնայ այսօր։ Յոգեւորական դառնալը դիւրին բան չէ. հոգեւոր ապրումներ ունենալը ժամանակաւոր ընթացք չէ. դուք ամէն օր հրաւիրուած էք ձեր հոգեւոր կեանքին մէջ նոր մակարդակ եւ գագաթ մը նուաճելու։ Ժողովուրդը ցաւեր ունի եւ ականջ կը փնտռէ, որպէսզի պատմէ իր յոյգերը, ցաւերը եւ տագնապները. ան որ ձեր դո՛ւռը կը գարնէ՝ կը բանաք այդ դուռը եւ ականջ կու տաք այդ ցաւերուն ու տագնապներուն, որ ժողովուրդը կ'ուզէ խօսիլ ձեզի, այդ ձեր ոչ թէ միայն պարտականութիւնն է, այլեւ սրբազան պարտաւորութիւնը»։

Քարոզի աւարտին, շնորհատրական ու երախտագիտութեան խօսքը արտասանելէ ետք, խօսքը ուղղելով վեհափառ հայրապետին, Քորճում սրբազան յայտնեց. «Վեհափառ տէր, այսօր լաւագոյն առիթը կը համարեմ ձե՛ր բեմէն, Ս. աթոռի կեդրոնէն, յանուն Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան թեմի գործադիր իշխանութեանց, Կրօնական ժողովին, Ազգային վարչութեան եւ մեր հազարաւոր ժողովուրդեան, ձեզ պաշտօնապէս հրաւիրել Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան թեմ, որպէսզի ձեր ե՛ւ հայրական, ե՛ւ հայրապետական ներկայութեամբ մխիթարութիւն ապրին մեր ժողովուրդի զաւակները»։

ՍՓԻՒՔԻ ՆՈՐ...

Շարունակուած 4-րդ էջէն

Տոքթ. Յրաչ Զիլինկիրեանի հետ գրուցած է ռատիոյի ղեկավար Վարդան Ակսոտ։

- **Արտասահմանի հայութիւնը (սփիւռքի) միօրինակ, միացեալ, մէկ նպատակ, մէկ գաղափար, մէկ մարմին մը չէ, եւ բոլորս գիտենք այս բանը։ Եւ այստեղ կու գաք սփիւռքի մասին, անոր ուղղութիւններուն, ակնկալիքներուն եւ ներուժին մասին հարցախոյզ մը իրականացնելու։ Ի՛նչ է ձեր խօսքը՝ ուղղւած մեր ժողովուրդին, ինչպե՛ս կրնաք իրենց ներկայացնել ձեր աշխատանքը, որպէսզի ի վերջոյ մասնակցին այս հարցախոյզիկը։**

Նման հարցումներու պատասխանելու համար ընդհանրապէս կը մէջբերեմ գրութիւնը Մարսելէն, Ֆրանսա, մեր հարցախոյզի գմանակիցներէն մէկուն, որ հարցաթերթիկին վրայ գրած էր. «67 տարւան մէջ առաջին անգամն է, որ իմ կարծիքս կը հարցնեն»։

Ուրեմն, ահաւասիկ հայկական սփիւռքի մասին հարցախոյզը առիթ մըն է, որպէսզի իւրաքանչիւր հայ, որ այսօր սփիւռքի մէջ կ'ապրի, իր կարծիքը արտայայտէ։ Մեր կազմակերպութիւններուն, կառոյցներուն մէջ մենք կը խօսիմք խնդիրներու մասին, բայց առիթ չենք ունեցած ուղղակի համայնքի անդամներուն հարցնելու, թէ դուք ի՛նչ կը մտածէք այս խնդիրներուն մասին, ինքնութեան մասին եւ այլն։ Յետեալբար իւրաքանչիւր հայ առիթ կ'ունենայ արտայայտուելու այդ հարցերուն շուրջ։ Մենք այդ բոլորը պիտի համադրենք եւ պատկերացում մը պիտի տանք, թէ այսօր՝ 21-րդ դարուն, օրինակ, ի՛նչ են Յիւսիսային Ամերիկայի մէջ ապրող սփիւռքահայերու ընդհանուր մտածելակերպը, գաղափարները եւ այլն։

- **Արտասահմանի մէջ յաճախ անուանի հայերէ կը լսենք, որ արտասահմանի հայկական կազմակերպութիւնները պետք է փոփոխութիւններ կրեն։ Ձեր կարծիքով, եթէ որեւէ բան կայ, որ կ'ուզէիք փոխել արտասահմանի կեանքին մէջ, ըլլայ կազմակերպչական միջոց կամ ձեւ, ի՛նչ պիտի ըլլայ այդ մէկը։**

Նկատի ունենանք մեր մինչեւ հիմա կատարած ուսումնասիրութեան արդիւնքները։ Այսօր սփիւռ-

Քարոզէն անմիջապէս ետք, «Ողջոյն»-ի պահուն, վեհափառ հայրապետին գլխաւորութեամբ ներկայ միաբան հայրերը Ս. խորան բարձրացան եւ նորընծաներուն նորաօծ ճակատն ու ձեռքերը համբուրելով ողջունեցին անոնց նոր առաքելութիւնը հայ եկեղեցւոյ ծառայական դաշտին եւ յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Միաբանական ուխտին մէջ։

Աւարտին, միաբանական թափօրը ուղղուեցաւ վեհարան, ուր նորընծաները ստացան վեհափառ հայրապետին անդրանիկ օրհնութիւնը։

Յուսկ, նորընծայ երեք միաբան հայրերը, մայր տաճարի Ս. Խորանին առջեւ կանգնելով ընդունեցին հաւատացեալ ժողովուրդի շնորհաւորանքները։

Յայտնենք, որ աւանդութեան համաձայն, նորընծայ հայր սուրբերը Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքին մէջ, հետեւելով մեր Տիրոջ Յիսուս Զրիստոսի օրինակին, յառաջիկայ 40 օրերը պիտի անցընեն արթօթով, պահեցողութեամբ եւ խոկումով՝ սկսելու համար իրենց սրբազան առաքելութեան։

Յայտնենք, որ օր մը առաջ՝ շաբաթ, 21 մայիս 2022-ին, Կիրակնամուտքի ժամերգութեան աւարտին կատարուեցաւ Դարբնվանքի երեք աւարտական սարկաւազներու քահանայական կոչման արարողութիւնը։

Ընծայեալ սարկաւազները խարտաւիլակ հայր սուրբին առաջնորդութեամբ, եկեղեցւոյ գաւիթէն ծնրադիր առաջնորդուեցան մինչեւ բեմ՝ իրենց ուխտը կատարելու եւ դառնալու հաւատարիմ ու ծառայաւեր սպասաւորները հայ եկեղեցւոյ։ Արարողու- թեան ընթացքին անոնք հրաժարեցան եւ նզովեցին բոլոր հերձուածողներն ու հերետիկոսները, հաւատքի ամրութեամբ ընդունեցին ու դաւանեցան սուրբ հայրապետներու բոլոր ուսուցումներն ու կանոններն եւ խոստացան ւաշակերտել եկեղեցւոյ ուղղափառ բոլոր ուսուցումներուն։

Արարողութեան աւարտին, ընծայեալ երեք սարկաւազները Յաւատքի ուղղափառ դաւանութիւնը ընթերցելէ անմիջապէս ետք, Աստուծոյ օրհնու- թեամբ եւ ազատ կամքով յանձն առին կուսակրօս քահանայութեան կարգը եւ Աստուծոյ ու հաւատաց- եալ ժողովուրդին առջեւ կատարեցին իրենց ուխտը եւ տուին իրենց խոստումը։

քի մէջ ապրող մարդիկ ունին երեք հիմնական մտահոգութիւն՝ գոնէ այն համայնքներուն մէջ, ուր եղած է ուսումնասիրութիւնը։ Առաջին՝ տեսիլք ունեցող ղեկավարութեան պակասը ունինք։ Մասնակիցներու 1/3-ը կ'ըսէ, որ մենք պէտք ունինք տեսիլք ունեցող ղեկավարներու։ Երկրորդ՝ պէտք ունին գիրենք հետաքըքրող, իրենց մտածողութեան եւ սպասելիքներուն համաձայն ծրագիրներու կամ միջոցառումներու։ Այսինքն, ինչ որ հիմա համայնքներուն մէջ կը իրամցուի մարդոց, ըստ երեւոյթին, բաւարար չէ։ Մարդիկ կ'ուզեն մասսակցիլ այնպիսի միջոցառումներու, որոնք զիրենց կը հետաքըքրեն։ Երրորդը՝ աւելի գործնական հարց մըն է։ Ժամանակի եւ հեռաւորութեան խնդիր կայ, համայնքի անդամները բաւական հեռու կ'ապրին կեդրոններէ եւ ժամանակին յարմարելու լուրջ խնդիրներ կ'ունենան։ Ուրեմն, իմ նկատումս այն է, որ այս երեք-չորս խնդիրները կեցտիտ առնուին, երբ համայնքային կառոյցները եւ կազմակերպութիւնները իրենց ծրագիրները մշակեն՝ գանկնք հրամցնելու տարբեր խափ մարդոց։

Այսինքն, այլ խօսքով, անցած են այն օրերը, երբ յանձնախումբ մը կամ փոքր խումբի մարդիկ կը նստէին եւ կ'որոշէին, թէ այսինչ ձեռնարկը պիտի ընեն՝ առանց հասկնալու կամ հարցնելու, թէ արդեօք նման պահանջարկ կա՞ր։ Եւ այստեղ է, որ այդ անընդհատ պէտք է համայնքի անդամներու բազկերակը շօշափենք, թէ ի՛նչ են տրամադրութիւնները, ի՛նչ է ժողովուրդին պահանքը, հեռանկարը եւ այլն։ Ըստ այդմ, այդ երկխօսութեան մէջ մեր համայնքներին ծրագիրները մշակենք։

- **Տեղեկութիւն ունենալը կարեւոր է որոշելու համար մեր ապագայ ընելիքները։ Արդեօք արհեստական բանականութեան միջոցները տեղ ունի՞ն ձեր հարցախոյզին մէջ՝ գիտնալու համար հայերու մտածելակերպը, եւ արդեօք կա՞ն համակարգչային միջոցներ՝ վերլուծելու հաւաքուած տեղեկութիւնները։**

Այս առումով երկու կէտ կ'ուզեմ նշել։ Առաջին հերթին մեր հաւաքած տեղեկութիւնները (data) տրամադրելու եւ եւ այդպէս պիտի մնան որեւէ ուսումնասիրողի համար, որ կ'ուզէ աւելի խորքային վերլուծութիւններ ընել կամ data-ն աւելի լայն ձեւով օգտագործել։ Այս աշխատանքը միայն փոքր խումբի մը համար չէ, այլ սկզբունքով ամէն ինչ բաց պիտի ըլլայ եւ տրամադրելի, ինչպէս որ մինչեւ հիմա եղած ուսումնասիրութիւնը արդէն հաւնրութեան համար մասշէլի է։ Երբ վերջացնենք դաշտային աշխատանքը, ենթադրենք, եթէ 10 հազար մասնակից ունենանք, ուրեմն միլիոնաւոր պատասխաններ պիտի ունենանք data-ի իմաստով։ Յետեալբար, ինչ կը վերաբերի արհեստական բանականութեան եւ կամ այլ գործիքներու, անշուշտ, այնտեղ data mining-ի համար հսկայական դաշտ մը պիտի ըլլայ։ Կարելի պիտի ըլլայ ուսումնասիրել եւ աւելի խորքային ըմբռնումով հասկնալ տրամադրութիւնները, գաղափարները եւ այլն։ Որպէս պատասխան ձեր հարցումին՝ այո՛, այս բոլորը հնարաւոր է, երբ այս երեք տարուան փուլը լրիւ եզրափակուի։

Լուսինէ Չաքարեանի մահից անցել էր ընդամենը մի քանի տարի, իսկ Խորէն Պալեանը շարունակում էր երազել, որ իրենց տունը դառնայ Լուսինէ Չաքարեանի տուն-թանգարան։ Իսկ ինքը, ինչպէս ասել է բազմաթիւ հարցա- գրոյցներում, ապրում էր, որ ապրեցնի Լուսինէին։

Խորէն Պալեանի ժառանգութիւնն ապրում է նաեւ գրքերում. հոգաբարձուների խորհրդի անդամ Երուանդ Տէր Խաչատրեանը կազմել է «Խորէն Պալեան. լոյս ի լուսոյ» գիրքը, որն ընդգրկում է Խորէն Պալեանի դասախօսութիւնները, նրա հարցազրոյցները, ինչպէս նաեւ՝ «Ժամակարգութիւնք Յայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ» աշխատութիւնը։ Գիրքը լոյս է տեսել «Գուրգէն Մելիքեանի՝ Զաշաթաղի բազմազաւակ ընտանիքների հիմնադրամ»-ի հովանաւորութեամբ։ Այսօր սպասում էր նաեւ գրքի շնորհանդէսը։ Բայց, քանի որ գրքի կազմող, առաջաբանի հեղինակ եւ այս շնորհակալ գործը կատարած Երւանդ Տէր Խաչատրեանը բացակայում էր երկրից, գրքի շուրջ քննարկումները կազմակերպուելու են առաջիկայում։ Եւ յուշ-երեկոն պարուրուած էր Խորէն Պալեանի եւ Լուսինէ Չաքարեանի մասին յիշողութիւններով, հոգեւոր երաժշտութեան շուրջ գեղեցիկ գրոյցներով։

Նշենք, որ թանգարանը մինչ օրս չունի պետական հովանաւորութիւն։ Սակայն անցնող երեք տարիների ընթացքում, կարող ենք ասել, իրականացել է Խորէն Պալեանի երազանքը. թանգարանը հասցրել է կայանալ՝ շնորհիւ նրա նուիրեալ տնօրէնի՝ տիկին Սուսաննա Դալեանի ջանքերի։ Նա իր խորին երախտագիտութիւնը յայտնեց այն նուիրեալներին, որոնք մշտապէս թանգարանի կողքին են, առաջին հերթին՝ Խորէն Պալեանի եղբորորդի, բժիշկ Րաֆֆի Պալեանին (ում ջանքերի շնորհիւ ստեղծուեց թանգարանը) եւ չմոռացաւ նշել նաեւ հոգաբարձուների խորհրդի անդամ Գուրգէն Մելիքեանի ներդրումը, որոնց շնորհիւ տնօրէնը կարողանում է իրականացնել թանգարանի նուիրական ծրագրերը, այդ թւում՝ Լուսինէ Չաքարեանի անուան հանրապետական առաջին մրցոյթը՝ «Տէնոր» միջազգային միութեան հետ համատեղ։

Յիշատակման է արժանի թանգարանի տնօրէնի խօսքից հետեւեալը.

- Ամէնից առաջ ուզում եմ երախտագիտութիւնս յայտնել դոկտոր Րաֆֆի Պալեանին. եթէ թանգարանն այսօր կայ, գործում է, նրա շնորհիւ է։ Րաֆֆի Պալեանը որպէս ազգի մեծի՝ Խորէն Պալեանի արժանի եղբորորդի՝ իրականութիւն դարձրեց նրա տարիների երազանքը։

Ուզում եմ առանձնապատուկ շնորհակալութիւն յայտնել փրոֆէսօր Գուրգէն Մելիքեանին , ում հովանու ներքոյ թանգարանը կարողանում է կազմակերպել Լուսինէ Չաքարեանի անուան մրցոյթը, որի յաղթողները դառնում են Լուսինէ Չաքարեանի անուան կրթաթոշակառուներ։

Այստեղ ներկայ է հոգաբարձուների խորհրդի մեր միւս նուիրեալը՝ Էդիկ Աւետիսեանը՝ Րաֆֆի Պալեանի ընկերը։ 2016-18 թթ. ընթացքում Լուսինէ Չաքարեանի եւ Խորէն Պալեանի բնակարանը նրա հոգատար հսկողութեամբ նորոգուեց. վերականգնուեց հոգեւոր-մշակութային այս օճախը։

Շնորհակալութիւն եմ ուզում յայտնել Խորէն Պալեանի եւ Լուսինէ Չաքարեանի օճախի բարեկամ Սամուէլ Միքայէլեանին, ով ոչ միայն հոգաբարձուների խորհրդի անդամ է, այլեւ Խորէն Պալեանի եւ Լուսինէ Չաքարեանի սանիկն է։

Մշտապէս թանգարաի կողքին եւ գրականագետ, փրոֆեսօրներ, Արծրուն Աւագեանը եւ Սամուէլ Մուրադ-

ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ...

Շարունակուած 4-րդ էջէն

եանը։

Ահարոն Արեւշատեանը եղել է Խորէն Պալեանի մտերիմ ընկերը եւ ինքն էլ երգում է շարականներ…

Տիկին Սուսաննա Դալեանի այս խօսքերին Ահարոն Արեւշատեանը ջերմօրէն արձագանգեց.

- Նա, որ եղել է Խորէն Պալեանի ընկերը, 1800 չէ, բայց մի քանի շարական հաստատ կ'իմանայ…

Եւ կատարեց Գրիգոր Նարեկացու շարականներից մէկը։

Լուսինէ Չաքարեանի թանգարանը արդէն երկրորդ տարին անընդմէջ կազմակերպում է նաեւ մրցոյթ, որի յաղթողները դառնում են Լուսինէ Չաքարեանի անուան կրթաթոշակառուներ։ Եւ այս խրախուսական քայլով երաժշտական հաստատութիւնների ուսանողներին մղում են դէպի հայ հոգեւոր երգը, որ դրանք շարունակեն հնչել սերունդների շուրթերին՝ իրենց մշտապէս մեծ Ուսուցիչ ունենալով Լուսինէ Չաքարեանին եւ Խորէն Պալեանին։ Յուշ-երեկոյի ընթացքում հանդէս եկան նաեւ այն ուսանողները, որոնք այս տարուայ մրցոյթի յաղթողներն էին։ Եւ դա խոստանալից էր, որ նոր սերունդը շարունակում է դարերի խորքից եկած մեր մշակոյթի կրողը լինել։

Լեզուաբան, արեւելագետ, իրանագետ, հասարակական գործիչ, քայլող առասպել, բանասիրական գիտութիւնների թեկնածու Գուրգէն Մելիքեանի տիկին Սուսաննա Դալեանին ուղղուած խօսքերը գալիս են վկայելու, որ «մէկ ծաղկով գարուն», այդուհանդերձ, գալիս է.

- Ռ՛վ է աւտում, թէ անհատները հարց չեն լուծում։ Միայնում են։ Սուսաննա, եթէ չլինէիր դու, չէր լինի այս գործիք, ապրող, մշտապէս շնչող թանգարանը։ Դու քո հոգու պարտքը կատարելով՝ ամէն պահ վառ ես պահում Խորէնի ու Լուսինի յիշատակը, որի համար յատուկ մեր խորին շնորհակալութիւնն ու խոնարհումը քեզ,- ընդգծեց փրոֆէսօրը…

Բանասիրական գիտութիւնների դոկտոր, փրոֆէսօր Սամուէլ Մուրադեանն ասում է.

- Նրանք երեւոյթ էին՝ ամէն մէկը իւրովի, միմեանց լրացնող։ Նրանք կարողացան հայ հոգեւոր երգը դուրս բերել եկեղեցու խորաններից ու դարձնել բեմական արժեք, ցոյց տուեցին մեր ժողովրդին իր հոգեւոր երաժշտութեան գանձերը։ Յիշում եմ, որ տարիներ շարունակ պետութեան կողմից արգելուած էին այդ երգերը կատարելը, արգելուած էր անգամ «Կիլիկիա» երգը… բայց Խորէն Պալեանը կատարեց այդ երգը։ Յետոյ նա ԵՊՅ բանասիրութեան բաժանմունքի ուսանողներից ստեղծեց «Յայ տոհմիկ» երգչախումբը, որը բազմաթիւ ելոյթներով հանդէս է եկել Յայաստանի տարբեր շրջաններում եւ Արցախում։ Որքա՛ն էր նա ոգեւորուել, որ ազատագրուել էր Արցախը։ Ու ես յիշում եմ, թէ ինչպէս իր հետ գնացիմք Արցախ։ Նա իր ստեղծած երգչախմբով շրջեց մեր բոլոր հնավայրերը եւ հայ տոհմիկ երգը տարաւ դէպի ժողովուրդը։

… Խորէն Պալեանն ապրե՞ց՝ ապրեցընելով միջնադարեան հայ հոգեւոր երգը։ Նա մեր միջնադարեան շարականների բերանացի իմացողն ու տարածողն էր, որ ազգային գանձերը դուրս հանեց եկեղեցու պատերից, հանեց ու վերադարձրեց ժողովրդին։ Եւ մենք դրանք սրբազնօրէ պատողը պիտի լինենք՝ որպէս փարոս մեր անցնելիք ճանապարհներին։ Դրանցում մեր գոյատեւման հենքն է՝ ընդդէմ արդի աշխարհի հոգեւոր մարտահրաւերներին։ Շնորհաւոր տարեդարձդ, սերունդներ Ուսուցիչ, միջնադարեան հայ հոգեւոր ժառանգութեան բացառիկ նուիրեալ…

10.03.2022թ. *Երեսն*

ԻՆՉՈ՞Ւ ԱՐԵՒԵԼԱՀԱՅ...

Շարունակուած 5-րդ էջէն

Սփիւռքահայութեան մասին մասնագիտական հարցախոյզդեր եւ գիտական ուսումնասիրութիւններ կատարւած են, որոնցմէ է վարժարանի դասընկերոջս եւ երբեմնի թաղեցիս՝ դոկտ. Յակոբ Տէր Կարապետեանին ուսումնասիրութիւնները եւ գիրքը (անգլերէն) «Հայկական ցեղային ինքնութիւնը իր բնաբանին մէջ՝ ընդհանուր եւ ընկերային-հոգեբանական դիտանկիւնէն» (6) եւ «Հայկական Սփիւռքի Հարցախոյզ» 2018 եւ 2019 ծրագիրները, եւ այլ ուսումնասիրութիւններ, որոնց յաջորդիւ անդրադարձ պիտի կատարուի։

22 մարտ 2022
(Շար. 4/5)
haroutchekijian.wordpress.com

1. «Կեանքի ուղիներով», Սիմոն Կրաւցեան, Ա. հաստր, Երր

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՄԻՕՐԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ...

Շարունակում 3-րդ էջին

Յայտագիրի բացման գեկուցումը ներկայացուց կատարեց Միշիկըն համալսարանի Տիրպոնի մասնաճիղի պատմության դասախոս Ե. տեղոյն Յայագիտական հետազոտությանը կերտողի վարիչ դոկտ. Արա Սանճեան: «Դար մը Մեծ եղեռնի ուրուականին հետ» խորագիրով անոր ներկայացումը անդրադարձ մըն էր եղեռնի օրերէն մինչեւ այսօր երկարող ժամանակաշրջանին մէջ տեղի ունեցած անկիւնադարձային իրադարձութիւններուն, աշխարհի չորս դիւ հանրային ոգեկոչման առաջին ձեռնարկներուն, մամուլի մէջ լոյս տեսած յիշատակումներուն եւ նահատակներու յիշատակին նուիրուած աշխարհի բոլոր ցամաքամասերուն վրայ կառուցուած յուշարձաններուն:

Սեմինարը ուներ նաեւ հիւր դասախոս մը՝ լիբանանցի երաժշտահան, գրող եւ թատերգակ Դանի Ռահպանի: Ռահպանի արաբերէնով ներկայացուց «Յայ արուեստագետներուն ներդրումը լիբանանեան մշակութային ինքնութեան կազմաւորման մէջ» գեկուցումը, որուն մէջ լուսարձակի տակ առաւ Լիբանանի մօտ եւ հեռու անցեալներուն, ինչպէս նաեւ ներկայի մշակութային ինքնութեան կազմաւորման մէջ իրենց ներդրումը բերած հայ արուեստագետներու անունները եւ արուեստի տարբեր մարգերուն մէջ անոնց տարած աշխատանքը: Ան իր խօսքին մէջ նշեց, որ հայ ժողովուրդը զգացական աշխարհի ունեցող ժողովուրդ է, եւ ուր որ ալ գտնուի՝ ան կը ծառայէ իր «Երկու հայրենիքներուն»: Ներկաներու ծափողոյններուն արժանացաւ յատկապէս իր գերդաստանի անդամներուն արհեստավարձ աշխատանքին ընթացքին, հայ տարբեր արուեստագետներու հետ ունեցած իրենց շփումին պատճառով լիբանանեան տար-

կիոյ կաթողիկոսութեան հայագիտական կեդրոնի դասախոս, Յայ անտարաբնական քոլեճի տնօրէն, գրաքննադատ Արմէն Իւրնէշեանի «Գրականութիւն եւ հոգեխոյ» դասախօսութեամբ: Ան հակիրճ ձեւով անդրադարձաւ հայ արձակագիրներու եւ բանաստեղծներու յետեղեռնեան հոգեխոյնի արտայայտութիւններուն եւ պատկերացումներուն: Այնտեղ էին Թէքեանի, Վահեանի, Օշականի, Ծառուկեանի, Յամաստեղի եւ ուրիշներու տողերն ու ապրումները եւ անոնց ընդմէջէն արտայայտուած հոգեխոյնը, ցաւն ու զայրոյթը:

Թեմայի երկրորդ դասախօսութիւնն էր «Սփիւռքի գրականութեան Ա. եւ Գ. սերունդներ» ձուլումէն յետիջողութեան վաւերագրում եւ պահանջատիրութիւն», որուն դասախօսն էր Յայկազեան համալսարանի դասախօս եւ HU Writing Center-ի հիմնադիր տնօրէն Անիթա Մուշոյեան: Ան անգլերէն լեզուով իր այս ներկայացումին համար առաջին սերունդին որպէս ներկայացուցիչ ընտրած էր Ուիլիլմ Սարոյեանը, եւ 3-րդ սերունդի ներկայացուցիչներէն Փիթըր Պալաքեանը. առաջինը՝ ցեղասպանութեան արարքի ըմբռնումի իր գրականութեամբ, իսկ երկրորդը՝ իրաւունքի եւ պահանջատիրութեան իր պոռթկումով: Ան անոնց գրականութենէն օրինակներ մէքերելով փորձեց բացատրել անոնց հոգեվիճակը եւ անկէ բխած ստեղծարարութիւնը:

Թեմայի վերջին ներկայացումը յատկացուած էր հայ համայնքային կեանքին մէջ արեւմտահայերէնի ունեցած դերին: «Արեւմտահայերէնը՝ խորհրդանշելով վերապրումի եւ գոյատեւումի» ներկայացումը կատարեց Քուէթի Ամերիկեան Միջին Արեւելքի համալսարանի մարդաբանա-



այլ նաեւ իբրեւ յետցեղասպանութեան վերապրումի ու արարումի կենսափորձ: Ան նաեւ լուսարձակի տակ առաւ երգչախմբային փորձը եւ արհեստավարձ երաժշտութեան վաստակը:

Երկրորդ թեմայէն ետք հասաւ ճաշի պահը, ուր ներկաները ճաշակեցին «Թռչնոց Բոյն»-ի տիկնանց յանձնախումբի պատրաստած համա-դան ճաշերը, եւ ժամ մը ետք, անգամ մը եւս ան-ցան սրահ՝ ունկնդիրներ դառնալու համար սեմինարի երկրորդ կիսուն, եւ երրորդ թեմային՝ «Բեմ եւ պատտառ»-ին:

Այս նիստի դասախօսներն էին դոկտ. Մովսէս Յերկեւեան, Վալէ Ատրուկի եւ Յրաչ Թոքաթեան. անոնց հետ գրուցեց զայիսնէ Մածունեան:

«Ոգեկոչում» գոյի եւ ծաւալի ընդմէջէն», այս էր խորագիրը առաջին ներկայացման, որուն մասին դասախօսեց գրականագէտ, արուեստաբան Մեծի Տանն Կիլիկիոյ կրթական-հայագիտական հայ մշակոյթի դասախօս դոկտ. Մովսէս Յերկեւեան: Ան երկայացուց նախաեղեռնեան շրջանին թրջական կոտորածներու անդրադարձը Ալվազովսկիի փորձառութենէն, անցնելով մինչեւ յետեղեռնեան շրջան՝ յիշելով արուեստագետներուն դերն ու անունները անոնց, որոնց արուեստը,- ըստ Յերկեւեանի,- կարելի չէ վերլուծել, առանց ի նկատի ունենալու ցեղասպանութիւնը: Անոնց երգած են խոր վիշտն ու անասելի ցաւը եւ արտայայտած են ըմբոստութիւնն ու ընդվզումը իրենց գործերով:

Նիստի երկրորդ դասախօսութիւնն էր «Շրջանի թատերախումբ»-ի եւ «Գեղարք» թատերակեդրոնի հիմնադիր, Յայկազեան համալսարանի եւ Յիւսիսային հայագիտական հիմնարկի դասախօս, բեմադրիչ Վալէ Ատրուկի «Եղեռնի նկարը բեմին վրայ»-ն: Ան իր ներկայացումին մէջ անդրադարձաւ Յամաստեան ջարդերէն ետք ստեղծուած թատերական գրաքննութեան այն ժամանակ՝ երբ հայերը կը տիրապետէին «թրջական թատրոն» ըստածին, ինչպէս նաեւ հայախօս ներկայացումներու եւ կարգ մը բառերու արգիւման, եւ անոնց առընթեր հայկական կողմի որդեգրած ներկայացումները կատարելու անթերուած ձեւերուն: Ըստ Ատրուկի, Տեղասպանութեան վերաբերող թատրոնը քաղաքական բնոյթ ուներ եւ առ այսօր դժուար է պահանջատիրութեան օրակարգը բաժնել անկէ:

«Բեմ եւ պատտառ» թեմայի վերջին դասախօսն էր Լիբանանի ֆրանսական Սեն ժոզեֆ համալսարանի դասախօս, լուսանկարիչ Յրաչ Թոքաթեան՝ իր «Յարցադրումներ Յայոց ցեղասպանութիւնը արժարժող շարժապատկերներու շուրջ» ներկայացումով: Ան իր դասախօսութեան ընդմէջէն ներկայացուց Յամասպանութեան հետ կապուած վաւերագրական կամ գեղարուեստական ժապաւեններ պատրաստելու հիմնախնդիրներն ու մարտահրաւերները եւ որդեգրուած մօտեցումները, ինչպէս նաեւ թուային պատկերը ցայսօր կատարուած աշխատանքներուն՝ նշելով անոնցմէ յիշաթմանները:

Երրորդ թեման աւարտելէն ետք, կարգը հասած էր չորրորդ ու վերջին նիստին՝ «Սփիւռքեան կառոյցներ եւ համայնքային կեանք»-ին: Դասախօսներն էին Լեւոն Շառոյեան, Շաղիկ Գաւտահարեան-Խիւտավերտեան եւ Յրակ Աւետանեան, իսկ գրուցավարը՝ Գրիգոր Ալոգեան:

Թեմայի դասախօսութիւններու բացումը կատարեց Յայկայ Յամազգայինի Յայագիտական հիմնարկի դասախօս եւ Մեծի Տանն Կիլիկիոյ հայագիտական հիմնարկի այցելու դասախօս Լեւոն Շառոյեան, իր «Յետեղեռնեան մտորումներ» սփիւռքահայ մամուլի էջերուն մէջ» դասախօսութեամբ, որ պատմական ակնարկ մըն էր յետեղեռնեան շրջանին սփիւռքահայ մամուլի մէջ լոյս տեսնող յատկանշական լուրերուն եւ պատմական իրադարձութիւններուն: Ան առանձնաբար քաղուածքներ մէքերեց Միւիթարեաններու «Բազմավէպ»-էն եւ Պուտոյ «Ազատամարտ»-էն, տեղոյն վրայ նաեւ վերլուծումներ կատարելով եւ անոնց անկիւնադարձային ու ճակատագրական ըլլալը նշելով:

Երկրորդ դասախօսութիւնն էր «Յետցեղասպանութեան կրթական կառոյցներ եւ ազգային ինքնութեան կազմաւորում»-ը, իսկ դասախօսը՝ Յայկազեան համալսարանի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի եւ հայագիտական կեդրոնի դասախօս Շաղիկ Գաւտահարեան-Խիւտավերտեան: Դասախօսը իր ներկայացումին մէջ անդրադարձաւ հայ դպրոցին դերին, ի մասնաւորի անհատական եւ հաւաքական ապահովում պահպանելի պայմաններու ստեղծումի բարհանջներու գոհացումին, լեզուի, մշակոյթի քաղաքացիական եւ ընկերային-քաղաքական կեանքի առողջ ընթացքի

ապահովման ուղղուած կրթական նպատակակետերուն, ազգային ինքնութեան պահպանման, ազգին հետ խորքային առնչուածութեան, իրագեկութեան եւ անկէ բխող առողջ եւ հաւասարակշիռ պատկանելիութեան զգացումի կերտումի գործընթացներուն: Ան իր խօսքին մէջ շեշտեց, որ հայ դպրոցը ոչ միայն կրթութեան եւ ուսումնական կեդրոն մըն էր, այլ նաեւ կը հանդիսանար երաշխիքը հայ ժողովուրդի գոյութեան:

Չորս թեմաներու դասախօսութիւններու փա-կումը կատարեց հետազոտող, յօդուածագիր եւ Պէյրութի Մամուլի ու թուային գրագիտութեան ակադեմիայի աշխատակից Յրակ Աւետանեան՝ իր «Սփիւռքեան հայրենիքի մը կառուցումը» Լիբանանի փորձառութիւնը» ներկայացումով: Ան ներկայացուց յետեղեռնեան շրջանին Լիբանանի մէջ եռուն եւ ծաղկող մշակութային շարժումը, որուն յառաջապահներն էին միութիւններն ու կուսակցութիւնները՝ իրենց հիմնած դպրոցներով, հայրենասցական միութիւններով եւ կառուցած եկեղեցիներով: Աւետանեան նշեց, որ սփիւռքը հայրենիքէն հեռու ըլլալով, իր հայեացքը միշտ յառած մնաց իր հայրենիքին ու ներընդունելով անկէ, պահեց իր ինքնութիւնը եւ ծաղկեցուց մշակութային հայրենիք մը հայրենիքէն դուրս:

Եւ որովհետեւ աշխարհագրական հայրենիքէն դուրս եղած այդ մշակութային հայրենիքը պարզաբանումի, սահմանումի, եւ անոր պատկերը բնութագրող կարիքը ունի, դասախօսութիւններու հարուստ այս շարքէն ետք սեմինարը ունեցաւ «Մշակութային հայրենիք» կերպուած ազատ քննարկում մը, որուն համար որպէս հիւր գրուցավար սեմինարին ներկայ էր քաղաքագէտ, «Ազգակ»-ի եւ «Վանայ ծայր»-ի աշխատակից եւ «Օ. Թի. Վի.»-ի խօսնակ Արմէն Ապտալեան: Օյն գոյոցին պատահականօրէն ընտրուեցան ներկայ մասնակիցներէն արուեստի տարբեր մարգերու մէջ դերակատարութիւն ունեցող երիտասարդներ, որոնց հետ գրուցավարը երկխօսութիւն ունեցաւ եւ հարցումներ ուղղելով փորձեց մտածել տալ պահ մը՝ աւելիին մասին:

Աւելի ուշ, ներկաները այցելեցին «Թռչնոց Բոյն»-ի «Արմէն Պեղեքեան» յանգրան, ուր նաեւ, ղեկավարութեամբ Գրիգոր Ալոգեանի, ելոյթ ունեցաւ «Գուսան» երգչախումբի արական կազմը, որ կատարեց Մեսրոպ Մաշտոցի ապաշխարութեան շարականներէն վեց կտոր՝ «ԱՁ Զոյման իմոյ», «ԱՁ Ի նեղութեան իմում», «ԴՁ Անկանիմ», «ԴՁ Տեր որ ի մէջ էրկին», «ԲՎ Մեղը իմ բազում են» եւ «ԱՎ Շով Կենցաղոյս»:

Սեմինարի աւարտին ներկաները ունեցան ընկերային պահ: Այնտեղ կարծիքներ փոխանակեցին ու տպաւորութիւններ փոխանցեցին ձեռնարկին մասին:

Սեմինարը միօրեայ էր, եւ մէկ օրուան մէջ փոփոխութիւն կարելի չէր բերել, սակայն մէկ օրը կրկայ հանդիսանալ առաջին օրը նոր մտածումի մը, նոր հայեցակարգի մը, նոր կենցաղեցի մը, որ օրերու ընթացքին կրկայ մշակուի, գարգանալ եւ ինչու չէ՝ տանիլ մեծ փոփոխութիւններու:

«ԳԻՄԱԳՐՈՒԹԵԱՆ» ԸԱՐԺՈՒՄԸ ...

Շարունակում Ա. էջին

«Տասնեակ ձերբակալումներն ու կալանաւորումները, բռնութեան կիրառման բազմաթիւ դէպքերը, այդ թուում՝ Ազգային ժողովի պատգամաւորների եւ անչափահաս քաղաքացիների նկատմամբ, հազարաւոր ապօրինի բերման ենթարկելու դէպքերը փաստում են, որ մէկ անձի բռնապետական հակումները բաւարարման համար իրաւապահ համակարգը գործադրում է իր բոլոր ճիգերը՝ խախտելով անգամ իրաւունքի եւ բարոյականութեան նուազագոյն պահանջները: Վերջիններս առանձնակի շնականութեամբ յարձակուել են դիմադրութեան շարժման առանցքային ուժերից Յայ յեղափոխական դաշնակցութեան վրայ: Ապօրինի յարուցուող բազմաթիւ քրեական գործերը, կուսակցութեան գրասենյակների, անդամների եւ համակիրների բնակարաններում իրականացուող խուզարկութիւնները, տասնեակների հասնող հարցաքննութիւնները, ձերբակալութիւնները, քաղաքական կալանաւորումները փաստում են ազգադաւ իշխանութեան մօտալուտ իշխանագրկման վախն ու սարսափը:

«132 տարուայ ընթացքում ԶՅԴ-ն բազմաթիւ զըրկանքներ ու բանտներ է տեսել, թշնամիների եւ դաւաճանների է դիմագրաւել, չի ընկրկել, յաղթահարել է բոլոր դժուարութիւնները, կանգնած է եղել հայոց պետականութեան կերտման եւ ամրացման ակունքներում: Սա մի հերթական փորձութիւնն է, որն աներկայ կը յաղթահարի եւ կը կերտի Յայաստանի եւ Արցախի, Յայոց պետականութեան նոր արշալոյս»:

Բոլորի ուշադրութիւնը հրաւիրելով Դաշնակցութեան նկատմամբ օրուայ իշխանութեան կողմից իրականացուող քաղաքական հալածանքներին նոր թափին՝ զգուշացում եւք Յայաստանի Սահմանութեանն ու օրէնքները ոտնակոյի անող իշխանութեան եւ նրա կամակատար բոլոր անձանց. օրէնքների ողջ խստութեամբ պատասխանատուութեան պահը մօտ է:



բեր խաւերու կողմէ անոնց «Ռահապեան» կոչուիլը, եւ այդ մէկը իրենց հպարտանքը դասելը: Ան շեշտեց, որ կարելի պիտի չլլար տեսնել Լիբանանի կարգ մը արուեստագետներ իրենց այսօրուան պատկերով, եթէ չլլար լիբանանահայ այս կամ այն արուեստագետին ներդրումը:

Յայտագիրի հիմնական չորս բաժիններուն չանցած, մասնակիցները ունեցան տուրճի կարճ դարձար մը «Թռչնոց Բոյն»-ի շրջափակին մէջ՝ թարմանալու եւ գիտելիքներով հարուստ օրուան տրամադրուելու նպատակով:

Դադարէն ետք, սկիզբ առաւ դասախօսութիւններու ճառատեսուած շարքը:

Օրուան մէջ խտացուած այս յայտագիրը կը բաժնուէր 4 գլխաւոր նիւթերու՝ «Լեզու եւ գրականութիւն», «Երաժշտութիւն», «Բեմ եւ պատտառ», «Սփիւռքեան կառոյցներ եւ համայնքային կեանք»:

Իւրաքանչիւր նիստի տեւողութիւնը մէկ ժամ էր եւ ուներ 3 դասախօս ու մէկ գրուցավար: Ամէն մէկ դասախօսութեան յատկացուած էր քառորդ ժամ, որ նախորդ ժամ մըն ալ կը մնար ինքին առնչուող գոյոցին: Չորուցավարը մէքընդմէք կը ներկայացնէր նիւթերը, հերթաբար կը ծանօթացնէր դասախօսները եւ կը իրաւիրեր զանոնք իրենց նիւթը ներկայացնելու:

Առաջին թեման էր «Լեզու եւ գրականութիւն»-ը, որ ներկայացուեցաւ դասախօսներ դոկտ. Արմէն Իւրնէշեան, դոկտ. Արտա Ճեպճեան եւ Անիթա Մուշոյեանի կողմէ: Նիստը վարեց Բրիստ Խորդեան:

«Լեզու եւ գրականութիւն»-ը սկիզբ առաւ Յայկազեան համալսարանի եւ Մեծի Տանն Կիլի-

կան բաժանմունքի դասախօս, լեզուաբան դոկտ. Արտա Ճեպճեան: Ան իր ներկայացման մէջ անդրադարձաւ տեղահանման հետեւանք՝ «զոհ սփիւռք»՝ յատկանշելով, համայնքին մէջ հայ լեզուն պահելու համար հայութեան փորձերուն՝ լուսարձակի տակ առնելով հայ լեզուի կարեւորութիւնն ու դերը, յատկապէս լիբանանահայ համայնքի տարբեր խաւերէն իր հաւաքագրած գանազան արտայայտութիւնները իբրեւ իրնք ունենալով:

Երկրորդ նիստը «Երաժշտութիւն»-ն էր, որուն որպէս դասախօսներ իրենց մասնակցութիւնը բերին դոկտ. Սիլիվա Անժելիք Ալաճաճի, դոկտ. Յայկ սրկ. Իւթիւճեան եւ Չաքար Բէշիշեան: Նիստի գրուցավարն էր Կարէն սրկ. Եօսուքեանեան:

«Երաժշտութիւն» բաժնի առաջին դասախօսն էր Ֆրանքլին եւ Մարշըլ քուէճի երաժշտութեան դասախօս դոկտ. Սիլիվա Անժելիք Ալաճաճի: Անգլերէն լեզուով անոր ներկայացման խորագիրն էր «Տարագրութիւն ծայրերիդ վրայ. գրառումներ յետեղեռնեան սփիւռքի երաժշտութեան, յիշողութեան եւ համակերպումէն հրաժարելու մասին», որուն մէջ մասնաւորապէս նշեց, որ հայկական երաժշտութեան վերաբերող ուսումնասիրութիւնները բոլորը կը դառնան դասախօս եւ հոգեկոտ երաժշտութեան շուրջ: Ան յայտնեց, որ յաճախ հայ անհատները, որոնք կ'ապրին տարբեր երաժշտութիւններով չեն զըտներ իրենց գիրքեք այդ ուսումնասիրութիւններուն մէջ, որոնք հիմնական են հայկական երաժշտութիւնը ներկայացնելու որպէս մաքրամաքուր եւ դասակարկին մօտիկ արուեստ, մինչ այդ՝ ժողովուրդին մեծ մասը այլ երաժշտութեամբ է որ կ'ապրի: Այլ խօսքով, օրինակ, կարելի չէ հայ երաժշտութիւնը ուսումնասիրած ժամանակ անտեսել հայկական փոփի մէջ դերը Ատիսին, որ ճամբայ հարթեց արեւմտահայերէնով նոր երաժշտական մշակոյթի մը ստեղծումին եւ կամրջելու հինը օրուան նոր **ռիթմերուն** հետ: Ան ներշնչեց եւ ստեղծեց հայալեզու նոր ոճ մը:

Թեմայի երկրորդ դասախօսն էր նըւազավար, երգչախմբավար եւ երաժշտագէտ, Փրակի Կարոյեան համալսարանի երաժշտական համոյթներու երաժշտագէտ դոկտ. Յայկ սրկ. Իւթիւճեան: Ան հանդէս եկաւ իր «Յայկական եկեղեցական երաժշտութիւնը Մեծ եղեռնի վաղորդայինի» դասախօսութեամբ, որուն մէջ լուսարձակի տակ առաւ ոչ միայն մեր կրած հոգեկոտ եւ մշակութային կորուստները՝ տեղահանման եւ յետցեղասպանութեան շրջանին, այլ անկէ ետք կատարուած մշակոյթը փրկելու աշխատանքները՝ երեւելի տարբեր անձանց փորձառութիւններուն ընդմէջէն:

Այս նիստի վերջին դասախօսն էր Չաքար Բէշիշեան, որ «Տարագիր երաժշտական կեանք. դասական եւ խըմբերգային կենսափորձը» դասախօսութեամբ անդրադարձաւ արհեստավարձ եւ գեղարուեստական մակարդակի վրայ սփիւռքահայ կեանքին մէջ երաժշտութեան դերին ու երաժշտական կեանքին բանի մը կարեւորագոյն յատկանշելներուն՝ ցոյց տալով անոր ներդրումը ոչ միայն հայապահպանութեան առումով,

ՄԱՀԱԶԳ

Տիկին Մարո Յեքիմեան
Տէր եւ տիկին Մետրոպ եւ Սիլվա Յեքիմեան
եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վալէ եւ Լարա Աքեան եւ զաւակունք
Տիկին Ափրիկէ Խաչիկեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Փանոս եւ Ժանեթ Ֆուրուզեան
եւ զաւակունք
Տէր եւ տիկին Գեորգ եւ Սիւզան Յեքիմեան
եւ զաւակունք

Տիկին Չեփիւն Սողոմոնեան եւ զաւակունք
Յաքիմեան եւ Ֆուրուզեան ընտանիքներ
Խաչիկեան եւ Մթոպեան ընտանիքներ
Թորոնեան եւ Բէշիշեան ընտանիքներ
Յամալեան եւ Փառոսեան ընտանիքներ
Աքեան եւ Սողոմոնեան ընտանիքներ
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն հօր, մեծ հօր եւ հարազատին՝

ՌՈՒՓԷՆ ՄԵՍՐՈՊ ՀԵՔԻՄԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ կիրակի, 22 մայիս 2022-ին: Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ երկուշաբթի, 23 մայիսին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Ռմէլի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին